

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ջ. Եսայան

**Հայոց տեղանուններ.
թուրքական այլափոխումներ**

Մենագրություն

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2014

ՀՏԴ 801: 941(479.25)

ԳՄԴ 81+63.3(2Հ)

Ե 584

Գիրքը հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության
ֆակուլտետի սոցիալ-տնտեսական
աշխարհագրության ամբիոնը

Խմբագիրներ՝

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ք. Հ. Հարությունյան,

պատմաբան **Գ. Մ. Բադալյան**

Ե 384 Եսայան Ջ.

Հայոց տեղանունները. թուրքական այլափոխումներ: Մենագրություն/
Ջ. Եսայան.- Եր.: ԵՊՀ հրատ., 2014.- 140 էջ:

Գիրքը երկլեզվյան է (հայերեն և անգլերեն):

Նրանում առաջին անգամ փորձ է արված ներկայացնելու հայկական տեղանունների անվանափոխության մեթոդները, հատկապես թուրքական տիրապետության շրջանում՝ տալով թուրքականացված տեղանունների ստուգաբանությունները:

Այն կարող է օգտակար լինել հայագետներին, Հայոց ցեղասպանության թեման ուսումնասիրողներին, ինչպես նաև հետաքրքրել ընթերցող հանրությանը:

The book has been guaranteed to be published
by the Social-Economic Geography Chair of
YSU Geographical-Geological Faculty.

Editors: professor **B. H. Harutyunyan,** Doctor of Historical Sciences, Associate
Member of RA NAS,
historian G. M. Badalyan.

The book is bilingual - translated into English.

There has been made an attempt to present methods of changing Armenian place names, especially during the period of Turkish rule, by means of introducing the etymologies of Turkified place names.

It may be helpful for Armenologists, investigators of Armenian Genocide, as well as may interest reading public.

ՀՏԴ 801: 941(479.25)

ԳՄԴ 81+63.3(2Հ)

ISBN 978-5-8084-1868-4

© ԵՊՀ հրատարակչություն, 2014

© Ջ. Եսայան, 2014

ՆԱԽԱԲԱՆ

Այս բովանդակությամբ գիրք գրելու մտադրություն առաջացել է ավելի քան չորս տասնամյակ տեղանուններով զբաղվելիս: Գրքում դասակարգված են հայկական ծագման աշխարհագրական օբյեկտների անուններ, որոնք թուրքերի կողմից հիմնականում թարգմանվել են, աղավաղվել, խեղաթյուրվել ու հարմարեցվել իրենց արտասանությանը, կամ էլ փոխվել են թուրքական որևէ նոր անվամբ:

Շնորհակալություն եմ հայտնում բոլոր նրանց, ովքեր օգնեցին գրքի բարելավմանը, հատկապես բանասեր-բառարանագիր Քեյթի Գունդակչյանին, ով սիրահոժար օժանդակեց թուրքերենի անվանափոխված տեղանունների ստուգաբանությունների ժամանակ:

INTRODUCTION

The idea of writing a book with such content was born while dealing with toponyms for more than four decades. toponyms. The book includes the classified names of geographic objects of Armenian origin that have mainly been translated, distorted and misinterpreted by the Turks, as well as adjusted to their pronunciation, or renamed with a rather new Turkish name.

I am grateful to all those who have supported me in upgrading the book, particularly to Katy Goundakjyan, a philologist-writer of a dictionary, who willingly assisted in finding the etymologies of toponyms that have Turkish names.

A U T H O R

Ջ. Հ. Եսայան

Նվիրվում է Հայոց ցեղասպանության
100-ամյակին

ՀԱՅՈՑ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ. ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՅԼԱՓՈԽՈՒՄՆԵՐ

Հայոց տեղանունները հայկական պատմական հուշարձանների, հայերեն ձեռագրերի ու գրքերի նման հայ ժողովրդի ժառանգած ամենասուրբ մասունքներից են: Հայոց տեղանունները հայ ժողովրդի մշակութային ժառանգության արժեքավոր բաղկացուցիչ մասն են, որոնց զգալի մասը գտնվում է Արևմտյան Հայաստանի տարածքում, որը բռնազավթվել է թուրքերի կողմից:

Տեղանվանաբանությունը կամ տոպոնիմիկան անվանաբանության (օնոմաստիկա) մի բաժինն է, որն ուսումնասիրում է աշխարհագրական տեղանունները, քննում նրանց իմաստը, ծագումը, կառուցվածքը, ինչպես նաև նրանց տարածման արեալները: Տեղանվանաբանությունն արժեքավոր տեղեկություններ է տալիս պատմությանը, աշխարհագրությանը, հատկապես բնակչության աշխարհագրությանը, օգնում է վերականգնելու հնագույն ցեղերի, տոհմերի և առհասարակ որևէ ժողովրդի առաջացման ու ձևավորման, տարաբնակեցման սահմանները, ուրվագծելու անցյալում լեզուների տարածման շրջանները, նախկին, ինչպես նաև ներկա առևտրական ու տարանցիկ ճանապարհների աշխարհագրությունը, ժողովուրդների վերաբնակեցման ուղիները, պատկերացում տալիս երկրների ու ժողովուրդների շփման, նրանց ունեցած քաղաքակրթության մակարդակի, ինչպես նաև տնտեսական ու մշակութային կենտրոնների մասին:

Արտացոլելով ազգային առանձնահատկություններ՝ տեղանունները պարունակում են տեղանվան մասին աշխարհագրական, պատմական, լեզվաբանական տեղեկատվական տվյալներ, ինչպես նաև տեղեկություններ տվյալ տարածքում ապրող ժողովուրդների ժամանակաշրջանի, զարգացածության և նրանց զբաղմունքի մասին:

Ժամանակագրական առումով հայկական տեղանունները հիշատակվում են սեպագիր շրջանից սկսած (օր.՝ Ամոջ, Առեղ) և հասնում մինչև մեր օրերը: Դրանք հիշատակվում են ուրարտական ժամանակաշրջանում (օր.՝ Լուերուխի երկրամաս, Մենուախիմիլի քաղաք), միջնադարում (օր.՝ Ագռավաքար՝ ամրոց Մեծ Հայքի Վասպուրական աշխարհում, Հաղարծին՝ վանք Մեծ Հայքի Գուգարք աշխարհում), նոր շրջանում (օր.՝ Անձակ՝ գյուղ Արևմտյան Հայաստանի Վանի նահանգում, Կաղզվան՝ քաղաք Կարսի մարզում), նորագույն շրջանում (օր.՝ Չարենցավան՝ քաղաք Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում, Անտառաշեն՝ գյուղ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում):

Ֆիզիկաաշխարհագրական անունները նույնպես հիշատակվում են վաղ ժամանակաշրջանից, սակայն քանի որ դրանք վարչատարածքային բաժանման չեն ենթարկվում, ուստի դրանց համար ժամանակն էական նշանակություն չունի: Այսպես՝ Մասիս (Արարատ) լեռ, Երասիս (Արաքս) գետ, Վանա լիճ, Արարատյան գոգավորություն՝ Հայկական լեռնաշխարհում:

Պատմական տարբեր ժամանակներում Հայաստանը՝ որպես պետություն, ունեցել է տարբեր սահմաններ: Այն իր առավելագույն տարածքն ունեցել է Տիգրան Բ Մեծի օրոք, երբ հասել է իր հզորության բարձրակետին. արևմուտքից՝ Միջերկրական ծովից տարածվում էր մինչև արևելքում՝ Կասպից ծով, հյուսիսից՝ Կուր գետից և Սև ծովից հասնում հարավում մինչև Վերին կամ Հայոց Միջագետք: Հայաստանի աշխարհագրական դիրքի նկարագրության, նրա գրաված տարածքի ու սահմանների մասին պահպանվել են գրավոր հիշատակություններ հունահռոմեական աշխարհագրագետների՝ Քսենոֆոնի, Էրատոսթենեսի, Ստրաբոնի, Պլինիոս Ավագի, Պտղոմեոսի և այլոց աշխատություններում:

Ըստ Ստրաբոնի՝ «Հայաստանի հարավը պաշտպանված է Տավրոսից, որը բաժանում է այն Եփրատի և Տիգրիսի միջև գտնվող ամբողջ երկրից, որ կոչվում է Միջագետք, արևելքից կցվում է Մեծ Մարաստանին և Ատրոպատենին, հյուսիսից՝ գտնվում են Կասպից ծովի վերևի՝ Պարաքոաթրասի լեռները և Աղվանք ու Վրացիք և Կովկասը, որ շրջապատում է այդ ժողովուրդները և հասնելով Հայաստան, միանում է Մոսքիկյան և Կողքիսի լեռներին: Մինչև Տիբարանների կոչված երկիրը, արևմուտքից գտնվում է Տիբարանի ժողովուրդը և Պարիադրես լեռը և Սկյուդիսես լեռը՝ մինչև Փոքր Հայք և Եփրատի հովիտը, որ բաժանում է Հայաստանը Կասպադովկիայից և Կոմմագենից»¹: «Աշխարհացոյց»-ում ու միջին դարերում, ընդհուպ մինչև 19-րդ դարը, բոլոր հեղինակները կրկնել են Ստրաբոնին: Ըստ հեղինակների մեծ մասի հիշատակությունների, ինչպես նաև ըստ Բրիտանական հանրագիտարանի²՝ «Հայաստանը լեռնային տարածություն է շուրջ 400000 կմ քառակուսու վրա»: Այստեղ, բնականաբար, չի հաշվված 11-14-րդ դարերում գոյություն ունեցած Կիլիկիայի հայկական պետության զբաղեցրած տարածքը³: Այն հիմնականում գրավում էր Հայկական լեռնաշխարհը և նրան հարակից տարածքները: Հայաստանի գտնվելու վայրի և զբաղեցրած տարածքի հարցերով զբաղվել են հիմնականում 19-20-րդ դարերի մի քանի

1 Ստրաբոն, Զադեց և թարգմանեց Հ. Աճառյանը, Երևան, 1940, էջ 53:

2 The New Encyclopaedia Britannica, London, h. 1, էջ 566:

3 Հ. Գաբրիելյան, Հայկական լեռնաշխարհ, Եր., 2000, էջ 8:

տանյակի հասնող աշխարհագրագետներ, պատմաբաններ և ուսումնասիրողներ:

Պատմական Հայաստանը՝ գտնվելով Արևելքի ու Արևմուտքի շփման շրջաններում, բազմաթիվ անգամ ենթարկվել է օտարների նվաճումներին: Եվ յուրաքանչյուր ներխուժման ժամանակ կատարվել են անվանափոխություններ՝ հաճախ կամայական անուններ տալով Հայոց աշխարհի տեղանուններին, որի հետևանքով Հայաստանի տարածքում առաջացել է տեղանունների ավելի քան տասը շերտ՝ հայկական-հայաստան-ուրարտական (օր.՝ Բիսինիլի, Նաիրի, Կումմախա, Հայասա, Տուշպա), ասորա-բաբելական (օր.՝ Էնգիտու, Արունի), խեթա-խուրրիական (օր.՝ Նուբանաշե, Խաթուշա), հին պարսկական (օր.՝ Մասիխ), բյուզանդական (օր.՝ Բիքաս, Մարտիրուպոլիս), արաբական (օր.՝ Ջեզիրե), թուրքական (օր.՝ Գյուլջիկ, Չիվիլի), ռուսական (օր.՝ Ֆանտան, Օստրայա գորա), վրացական (օր.՝ Սոմխեթի, Էգրիսծղալի), քրդական (օր.՝ Նավալե Կալո, Զավ):

Տեղանունները հազարամյակներով հարատևում են, անգամ այն պարագայում, երբ պատմական ասպարեզից վաղուց վերացել են տվյալ ժամանակահատվածում տեղանուններն անվանակոչած որոշակի ցեղեր և ցեղախմբեր: Այսպես. «Ռուսա Բ-ի (մ.թ.ա. 685-645 թթ.) Չվարթնոցում հայտնաբերված արձանագրությունում Սևանա լճից դուրս եկող Հրազդան գետն անվանված է Իլդարունի, որի առաջին **Իլդ** բաղադրիչը նշանակում է «գետ», իսկ երկրորդը՝ **արուն**-ը նշանակում է ծով (խեթերեն), ուրեմն Իլդարունի նշանակում է «ծովագետ»: Հրազդան բառի **դան** բաղադրիչը նշանակում է գետ: Հնդեվրոպական լեզվում գոյություն է ունեցել *juro*=ջուր բառը, որ տարբեր լեզուներում ունեցել է ջուր, անձրև, ճահիճ, լիճ նշանակությունը: **Հրազ**-ը որոշ լեզուներում հանդես է գալիս յուրես, յուրիոս, յուրա ձևերով: Եվ կասկած չի հարուցում Հրազդան գետի առաջին բաղադրիչի՝ **հրազ**-ի առաջացումը **յուրաս-հուրաս** անցումով, որը միանգամայն բացատրելի է հայերենի հնչյունական օրինաչափություններով: Եվ իրանական ազդեցության հետևանքով դարձել է **Հրազդան**, որը նույնպես նշանակում է **ծովագետ**»⁴: Այսինքն՝ ուրարտական Իլդարունի և ներկայիս Հրազդան տեղանուններն ունեն նույն նշանակությունը, և հնագույն Իլդարունին Հրազդան այլափոխվելով պահպանել է իր ստուգաբանական ծովագետ իմաստը: VII դարի հայ պատմիչ Սեբեոսը Հրազդան գետը հիշատակում է Հուրազդան անվամբ: Միջնադարյան հայ հեղինակներից Հովհաննես Դրասխանակերտցին (IX դարի վերջ-X դարի սկիզբ) և Վարդան Արևելցին (XIII դար) Հրազդան գետը

4 Յ. Կարազեղզեան, Սեպագիր տեղանուններ, հ. 1, Եր., 1998, էջ 221:

հիշատակում են Հուրաստան անվամբ:

Հայկական լեռնաշխարհի տարածքի տարբեր մասերում պահպանվել ու մեզ է հասել Վանի թագավորության ողջ տարեգրությունն արտահայտող 800-ից ավելի ուրարտական սեպագիր արձանագրություն, և այս գրավոր ժառանգությունը հայ ժողովրդի հոգևոր մշակույթի մասն է:

Հայոց տեղանունների անադարտությունը պահպանվեց մինչև օտարների մուտք գործելը Հայաստան, որից հետո գործածությունից դուրս են մղվել տիպիկ հայկական, պատմական, բարեհունչ հազարավոր անուններ, որոնք տարբեր ժամանակներում թարգմանվելով, այլափոխությունների ենթարկվելով՝ աղավաղվել կամ փոխարինվել են օտարահունչ, երբեմն էլ վերանվանվել են հորինված անուններով: Այս դեպքում շատ են տուժել հատկապես ֆիզիկաաշխարհագրական օբյեկտների անունները, եթե հաշվի առնենք այն, որ հայ պատմիչները պատմական բազմաթիվ իրադարձություններ նկարագրելիս հիմնականում հիշատակել են երկրների, նրանց վարչական բաժանումների, բնակավայրերի անունները և ավելի քիչ՝ Հայկական լեռնաշխարհի ֆիզիկաաշխարհագրական միավորների անվանումները: Դրանցից շատերը պատմական որոշակի ժամանակահատվածում այդպես էլ մնացել են անանուն: Ֆիզիկաաշխարհագրական տեղանունները հիմնականում անվանակոչվել են XIX դարից սկսած:

Հին հայկական տեղանունների անվանափոխումների մեծ մասը կատարվել է թուրքական վաչկատուն, խաշնարած ցեղերի Հայաստան ներթափանցելու հետևանքով: Նրանք սկզբից նեթ տեղաբնիկ հայերին ենթարկել են տարատեսակ ճնշումների. հարթ ու բերրի հողատարածքներից, բարեկարգ ու շեն տներից ստիպել են հեռանալ սակավահող և մշակության համար քիչ պիտանի հողատարածքներ ունեցող վայրեր, ծանր հարկեր են դրել հայերի վրա⁵, հափշտակել նրանց ունեցվածքը: Ինչպես նկարագրում է Սիմեոն Լեհացին. «Ամենուր ավազակներ էին, ամենուր թալան, կոտորած և բռնություն էր»⁶: 1915 թ. Սելիմ Ա սուլթանի հրամանագրով անկանոն տղահավաքն ու աղջկահավաքը, արյան հարկ կոչվածը, դեշիրմեն մեծ աղետ դարձան հպատակ ժողովուրդների համար⁷: Եվ սա կատարվել է դարեր շարունակ: Այնքան ուժեղ են եղել թուրքերի ճնշումները հայերի նկատմամբ, որ նրանց ահից պատմական Հայաստանի շատ բնակավայրերում՝ ինչպես

5 Լեոն Վարդան, Հարկերը Օսմանեան և Պարսկական կայսրություններում մեջ ԺԵ-ի դար, Եր., 2004:

6 Սիմեոն Լեհացի, Ուղեգրություն, Վիեննա, 1936, էջ 153-154:

7 Օսման Նուրի, Աբդուլ Համիդ ու իր կառավարման դարաշրջանը, հ. 2, 1876 (օսմաներեն լեզվով):

օրինակ պատմական Փոքր Հայքի Մալաթիայի նահանգում, հայերի տները դեպի փողոց բացվող պատուհաններ չունեին⁸:

Սակայն չբավարարվելով դրանով՝ նրանք հետևողականորեն արգելում էին հայերեն խոսքը և անավոր պատիժներ ու ճնշումներ էին գործադրում Հայաստան բառն արտասանողների և հայերեն խոսողների նկատմամբ: Սկսած 1880 թ.՝ Հայաստան անունն արգելվել է պաշտոնական փաստաթղթերում⁹: Ահա թե ինչ է գրում հայ մեծանուն լեզվաբան, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Հր. Աճառյանն այդ մասին. «Ամենն առելի ազդուած են Փոքր-Ասիոյ միջավայրը և Պալքանեան քերակղզիին արևելեան ծայրը, որոնց մէջ օսմանեան տէրութեան գործած բնական և պաշտօնական՝ ազդեցութիւնը՝ միանալով բռնակալական ճնշման հետ անհետ է ըրած բոլորովին հայ բարբառը...»¹⁰: Եվ ապա ծանոթագրում է. «Կը հաստատեն թէ այս տեղերու կառավարիչները մահուամբ պատժել սպառնացած են հայերէն խօսող անձե-րը»¹¹:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո ճնշումներն ավելի սաստկացան և դարձան համատարած, հատկապես 1890-ական թվականներից հետո, իսկ 1895-1896 թթ. պետական մակարդակով կազմակերպվեցին հայերի մասսայական կոտորածներ: Դրանք 1909 թ. իրականացվեցին Կիլիկիայում, իսկ իրենց վայրագության գագաթնակետին հասան 1915 թ. (ապրիլի 24-ին)՝ Հայոց ցեղասպանության սահմնդեցուցիչ տարում և շարունակվեցին մինչև 1923 թ.: Մեր հաշվարկներով՝ 1890 թ-ից մինչև 1923 թ. ընկած ժամանակահատվածում թուրքերի կազմակերպած հայկական կոտորածներից տուժել են, զուտ հայաբնակ և խառը բնակչություն ունեցող, շուրջ 2700 բնակավայրերում ապրող հայեր¹²: Եվ այդ բնակավայրերի թիվը լրացուցիչ ուսումնասիրությունների արդյունքում անպայման կավելանա՝ դրանցից շատերն արդեն անվանափոխված են:

Գերմանիայի արտաքին գործերի նախարարության բարձր պաշտոնյա Վ. Ռեուլերին 1914-1918 թթ. հյուպատոս էր Թուրքիայում և ականատես է եղել հայկական ջարդերին: Ռեուլերին կազմել է մի գաղտնի տեղեկագիր,

8 Ա. Ալադյաճեան, Պատմութիւն Մալաթիոյ հայոց, Տեղագրական պատմական և ազգագրական, Բեյրութ, 1961, էջ 1097:

9 Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Եր., 1981, էջ 137:

10 Հր. Աճառեան, Թուրքերէնէ փոխառեալ բառեր հայերէնի մէջ, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Գ, Մոսկուա-Լադարշապատ, 1902, էջ 5:

11 Հր. Աճառեան, նշվ. աշխ., էջ 5, ծանոթագրություն:

12 Դրանք թվարկումը տես Ջ. Տապան, Պատմաշխարհագրական տվյալներ հայոց ցեղասպանության մասին, Եր., 2005, էջ 7-162:

որն Արամ Անտոնյանի կազմած հուշագրի փաստաթղթերի հետ միասին մեծ դեր է խաղացել հայ ազատագրական շարժման քաջարի ներկայացուցիչ, Թալեաթին սպանող Մոդոմոն Թեհերյանի դատավարության ժամանակ նրան արդարացնելու և ազատման գործում¹³:

Հետապնդելով հեռահար նպատակներ, նաև ուժեղացնելու համար թուրքական իշխանությունը՝ Հայոց ցեղասպանությունից ավելի քան կես դար առաջ Օսմանյան կայսրությունում կատարվեցին նոր վարչական բաժանումներ, որոնց մասին պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Թ. Հակոբյանը գրում է. «Արևմտյան Հայաստանի վարչատարածքային բաժանման մեջ 19-րդ դարի երկրորդ կեսում տեղի ունեցան փոփոխություններ՝ արդյունքում լրիվ վերացվեցին ... հայկական իշխանությունների մնացորդները»¹⁴:

Հայոց տեղաբնակների համատարած անվանափոխումներն անց էին կացվում համաձայն թուրքական կառավարության կողմից վաղօրոք մշակված և գործածության մեջ դրված պետական հրամանագրի¹⁵: Վերջինիս համաձայն՝ անհրաժեշտ էր շատ կարճ ժամանակամիջոցում ամեն կերպ ազատվել իրենց համար օտար անվանումներից՝ հստակ գիտակցելով, որ դրանց ծանրակշիռ մասը հայկական էր:

Հրամանագրում նշվում է, որ այդ անունները պետք է անպայման հաջող ընտրվեն, հակառակ դեպքում՝ վտանգ կարող է լինել, որ գործածության մեջ կմնան դրանց նախնական անունները: 1916 թ. Օսմանյան կայսրությունում գործող հրամանագրով նախատեսված էր անվանափոխությունների միջոցով ոչ միայն հայկական տեղաբնակներից, այլև թուրքերի համար օտար՝ քրիստոնյա ուրիշ ժողովուրդների՝ բուլղարների, հույների անվանակոչած տեղաբնակներից ազատվելը: Այդ մասին Ռ. Հովհաննիսյանը գրում է. «Ցեղասպանության ժխտումը արդարացիորեն համարվում է վերջնափուլ, երբ ազգի ոչնչացումից հետո արմատախիլ են արվում վերջինիս մշակույթն ու պատմական հիշողությունը»¹⁶:

Ու սկսվեց հայ ժողովրդի հիմնովին կոդուպտված, հիմնականում անայացած, ավերված կամ կիսավեր, երբեմն էլ հրկիզված՝ հայրենիքի

13 Հուշամատեն, Մեծ Եղեռնի (1915-1965), կազմող Գ. Ահարոնյան, Պեյրուք, 1965 թ., էջ 234-235:

14 Թ. Հակոբյան, Հայ ժողովրդի պատմության հիշարժան վայրերը, Եր., 1990, էջ 54:

15 Այդ հրամանագրի առաջին անգամ հայերեն թարգմանված օրինակը տես Լ. Սահակյան, Տեղաբնակների թուրքացումն Օսմանյան կայսրությունում և Հանրապետական Թուրքիայում, Մոնրեալ-Արոդ, 2010, էջ 33-35:

16 Р. Ованнисян, Отрицание: Геноцид армян как прототип такого подхода: Вестник: Армянский институт международного права и политологии в Москве, 2004, стр. 49.

քաղաքների և գյուղերի, վանքերի, եկեղեցիների, տաճարների, մատուռների, անառիկ բերդերի ու ամրոցների, կամուրջների, վարչատարածքային և ֆիզիկաաշխարհագրական հագարավոր տեղանունների անվանափոխման մի ծավալուն գործընթաց, որի հետևանքով Հայոց բնօրրանը ողողվեց աղավաղված, թուրքականացված, օտարածին, բնիկ հայերին անծանոթ անվանումներով: Ահա թե ինչ է գրում «Հայկական սովետական հանրագիտարան»-ը Արևմտյան Հայաստան անվանումը վերացնելու և նրա փոխարեն Անատոլիա (հունարեն նշանակում է արևելք, արևածագ) անունը շրջանառության մեջ դնելու մասին. «1923-ից թուրքական գրականության մեջ Ա. (Անատոլիա-Ջ.Ե.) են անվանում, ողջ Ասիական Թուրքիան՝ ներառյալ Արևմտյան Հայաստանը և Քրդստանը, որով և խեղաթյուրվել է այդ տերմինի աշխարհագրական բովանդակությունը»¹⁷: Իրենց արտասանությամբ թուրքերն անվանում են Անադոլու:

Էրմենիստան տերմինը թուրք հեղինակները գործածել են ընդհուպ մինչև 19-րդ դարի վերջերը: Այսպես՝ 19-րդ դարի երկրորդ կեսի թուրք պատմիչ Օսման Նուրին բազմիցս է հիշատակում Հայաստան անունն իր «Արդուլ Համիդ 2-րդ և նրա իշխանության շրջանը» եռահատոր աշխատության մեջ¹⁸:

Բժախնդրորեն կազմակերպված և մեթոդիկ կերպով իրականացվող անվանափոխությունների գործընթացը թուրքերի կողմից փոքր-ինչ դանդաղել է միայն Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում, որից հետո այդ գործընթացը դարձյալ նոր թափ է առել: Դա հանգեցրել է նրան, որ եթե Թուրքիայի Հանրապետության 1920-1930-ական թթ. քարտեզներում նշանակված տեղանուններում դեռևս որոշ չափով պահպանվում էին հայկական արմատները, ապա 1970-ական թվականների քարտեզներում դրանք հասցված են նվազագույնի: Նպատակադրված ու հետևողականորեն իրագործելով պետական հրամանագիրը՝ 2010 թ. թուրքերն արդեն անվանափոխել էին Թուրքիայի Հանրապետության գյուղական բնակավայրերի 1/3-ից ավելին:

Հր. Աճառյանն այն կարծիքն է հայտնում, որ հայոց տեղանունների թուրքերենի փոխելու գործընթացում նկատվում է հետաքրքիր մի երևույթ, այն է՝ այդ անվանափոխությունները կատարելիս թուրքերը երբեմն անդրադարձել են հայերենին: Օրինակ՝ Թեքիր անվան մասին ասում է, որ այն

17 Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1, Եր., 1974, էջ 373:

18 Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին (Թարգմանություն բնագրից Ա. Սաֆրաստյանի և Գ. Հ. Սանթրուքյանի), հատոր 4, Եր., 1972, էջ 126:

նշանակում է «արքայաձուկ» և գրում. «... այս բառը թուրքերենը փոխ է առած հայերեն բազաուր բառն, իսկ հայերը փոփոխեալ ձևով ետ առած են երկրորդ անգամ՝ իբր թուրքերեն բառ»¹⁹: Եվ իսկապես՝ Կլիլկիայում, Հալեայի նահանգի Մարաշի գավառում, Ջեյթունի գավառակում՝ Պյոռամոս կամ Ջեյհան գետի ավազանում կա Թագավորի ջուր անվամբ գետակ, որը դարձվել է Թեքիրսու, որտեղ «սու»-ն նշանակում է ջուր: Ավելին՝ նույն գավառակում՝ Կանչի գյուղից ոչ հեռու, տարածվում է Թագավորի լեռնաշղթան, որը նույնպես դարձվել է Թեքիր: Ահա թե ինչ է գրում Աղասին այդ մասին. «Ջեյթունի Կանչի գյուղը Ռուբինյան օրերին արքայական կոչված էր. այդ էր պատճառը, որ նրան շրջապատող լեռները կոչվում են Թեքիր կամ Թագավորի լեռ, և նրանից հոսող ջուրն էլ Թագավորի Ջուր (Թեքիր Սու)»²⁰: Նույն բանը կատարվել է նաև թուրքերեն «յաղ», որ հայերենի «յուղ»-ից է, արմատով կազմված տեղանունների դեպքում: Հր. Աճառյանն այս մասին գրում է. «Յաղ... թուրքերեն բառը փոխառեալ է հայերեն եղ ձևն և յետոյ իր փոխում ձևով վերադարձած է հայերենի»²¹: Ըստ Հր.Աճառյանի՝ շենլիք բառը, որ նշանակում է ուրախություն, հանդես, զվարթ մարդ կամ տեղ, ևս ունի հայկական ծագում. «Շենլիք, շէյնլիգ... թուրք. բառը կը ծագի հայ. շէն բառն, իսկ և՛ տաճկական մասնիկ է»²²:

Այնուամենայնիվ, թուրքերեն իրականացրել են անվանափոխությունների մի մեծ գործընթաց:

Ներկայացնենք Խարբերդ քաղաքի, Խարբերդի նահանգի և Խարբերդի դաշտի անվանափոխման թուրքական սկզբունքները: Արածանի (Արևելյան Եփրատ) գետի ձախափնյակում՝ Ծովք լճից հյուսիս-արևմուտք գտնվող Խարբերդ քաղաքը հնում մտնում էր Մեծ Հայքի Ծովք աշխարհի Անձիս (Հանձիք) գավառի մեջ: Խարբերդ անվան ծագումը կապվում է Խարբերդի տարածքում հնագույն ժամանակներում գտնվող Խար գյուղի անվան հետ, որին քաղաքի բերդի կառուցման հետ հետագայում ավելացել է նաև «բերդ» բառը՝ դառնալով Խարբերդ: Խարը խորրիներեն ստուգաբանվում է որպես «ճանապարհ», ուստի և Խարբերդ նշանակում է «ճանապարհի բերդ»²³: Մ. Հովհաննիսյանն այս մասին գրում է. «...Խար հին բառ է, որ նշանակել է

19 Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 130:

20 Աղասի (Կարապետ-Թուր-Սարգիսյան), Ջեյթունը և իր շրջակաները, Պեյրոք, 1968, էջ 21:

21 Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 243:

22 Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 260:

23 Հայկական սովետական հանրագիտարան, հ. 5, Եր., 1979, էջ 38:

ճանապարհի և բերդը շինված է եղել ճանապարհին իբրև ապաստան»։ Նա դարձյալ անդրադառնում է այս հարցին և գրում. «Ըստ ոմանց Խար մի հին լեզվով նշանակում է ճանապարհի և տեղը կոչվել է ճանապարհների քաղաք-բերդ»²⁴։ Դա հասկանալի է, քանի որ Խարբերդի գավառով և Խարբերդի դաշտով էր անցնում Պարսից Դարեհ I-ի Առաջավոր Ասիայում կառուցած տարանցիկ մայրուղին՝ «Արքայական ճանապարհը»։ Վաղ ժամանակներից եկող Խարբերդ անունը թուրքերն այլափոխել են Հարփուր։ Խարբերդ քաղաքի ժայռոտ տեղանքն ու ջրագուրկ կլիմայական պայմանները չեն գոհացրել տեղի հայերին, և նրանց մի մասը 1617 թ. տեղափոխվել է Խարբերդից հարավ-արևմուտք ընկած քաղաքամերձ հարթավայրը ու հիմնադրելով նոր քաղաք՝ այն կոչել Նոր Խարբերդ։ Վերջինս 1878 թ. դարձել է Խարբերդի նահանգի վարչական կենտրոնը, որը վերանվանվել է Մեզլիե (Մեզրե), որի մագրա ձևը՝ ըստ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Հր. Աճառյանի. «արտօրայք, շրջակայ մշակելի հողեր = արաք. արտ, հանդ, որ ծագում է ցանել արմատից»²⁵։ Արդուլ-Ազիզի սուլթանության ժամանակ (1861-1876 թթ.) քաղաքն անվանափոխվել է Մամուրեթ-ուլ-Ազիզ, նույն անվամբ էլ կոչվել է նաև Խարբերդի նահանգը²⁶։ Քաղաքը և նահանգը հետագայում կոչել են Էյլազըզ, որը թուրքական անձնանուն է։

Հայկական լեռնաշխարհում, Հայկական Տավրոս լեռնահամակարգից հյուսիս, Արածանի գետի ստորին հոսանքի շրջանում գտնվում է Խարբերդի դաշտը, իր գեղեցկության համար հենց այդպես էլ անվանել են՝ Գեղեցիկ դաշտ, իսկ բերրիության համար դեռ վաղնջական ժամանակներից հայտնի էր Ոսկեդեն դաշտ անվամբ։ Դաշտը կոչվել է նաև Ալեյուա անվամբ, որը թուրքերը վերաիմաստավորելով այլափոխել են՝ դարձնելով Ուլուօվա (ուլու=մեծ, օվա=դաշտ), և այդ անունը տվել դաշտի մեծ մասը կազմող հատվածին, սակայն այն կրկին վերանվանել են՝ կոչելով այդտեղ գտնվող Մուլաքենդ գյուղի անունով՝ Մուլաքենդի դաշտ։ Ըստ Հր. Աճառյանի՝ մոլլան նշանակում է մահմեդական սպիտակ փաթեցով կրոնավոր²⁷, իսկ քենդը նշանակում է գյուղ։ Խարբերդի դաշտի մյուս հատվածը ներկայումս կոչվում է Էյլազըզ։

Հայկական տեղանունների թուրքականացման սկզբունքների մասին

24 Մ. Հովհաննիսյան, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 40, էջ 60:

25 Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Եր, 1997:

26 Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Եր., 1988, էջ 468:

27 Հր. Աճառյան, Թուրքերեն փոխառեալ բառեր հայերենի մէջ, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Գ, Մոսկուա-Վաղարշապատ, 1902, էջ 241:

պատկերացում կազմելու համար հարկ ենք համարում ներկայացնել դրան-
ցից առավել կարևորները:

Սկսենք համեմատաբար ավելի հաճախ հանդիպող ձևերից.

1) Հայկական տեղանունները թուրքերն անվանափոխում էին հիմնա-
կանում թարգմանաբար, աշխարհագրական օբյեկտների անուններում
առավել հաճախ գործածվող բառերից ներքինը նրանք դարձրել են **աշա-
ղը**, վերինը՝ **յուբարը**, միջինը՝ **օրթա**, մեծը՝ **բյույուք**, փոքրը՝ **բյուչուկ**, նորը՝
եննի, հինը՝ **էսկի**, սպիտակը՝ **աղ** կամ **աք**, սևը՝ **կարա (դարա)**, կարմիրը՝ **կզըլ
(դզըլ)**, գյուղը՝ **քենդ** կամ **քյոյ**, ագարակները՝ **չիֆթլիք**, կամուրջը՝ **բյուփրյու**։
Ֆիզիկաաշխարհագրական օբյեկտներից աղբյուրը թարգմանել են **բուլաղ**,
լիճը՝ **գյոլ**, գետը և ջուրը՝ **չայ** և **սու**, լեռն ու լեռնագագաթը՝ **դաղ** ու **թափա**,
ծորը՝ **դերե** կամ **դերեսի**, բացատը՝ **թալա**, ամառանոցավայրը՝ **յայլա** և այլն։
Վերջիններս, ինչպես նաև թուրքական հոգնակիակերտ՝ «լար», փոքրացու-
ցիչ՝ «ջիկ» կամ «ջուկ», և «լի» կամ «լու» տեղ ցույց տվող վերջածանցները
պարզապես կպցրել են հայկական տեղանուններին ու Հայկական լեռնաշ-
խարհն անհարկի լցրել շինծու և օտարածին տեղանուններով, որոնք, ան-
վանի լեզվաբան, ՀՀ ԳԱԱ սկադեմիկոս Գևորգ Ջահուկյանի գնահատմամբ,
գիտական նյութ համարվել չեն կարող:

Արևմտյան Հայաստանում, Դիարբեքիի մահանգի Արղանամադենի
գավառի Բալուի գավառակում՝ ձորալանջին եղած Կանգար կամ Կանկակ
գյուղի անունն առաջացել է հայերեն կանկար՝ փշոտ բուսատեսակի անու-
նից, որը կոչվում է նաև արտիշոկ կամ արտիճուկ, և որն առատորեն տա-
րածում է գտել այդտեղի սարերում: Ըստ Հր. Աճառյանի՝ «Կանկարը փշոտ
բոյս է, որի ընտանին յարգի բանջարեղեն է»²⁸, իսկ ըստ լեզվաբան, ՀՀ ԳԱԱ
սկադեմիկոս Էդ. Աղայանի՝ կանկարը ուտելի փշոտ բոյս է, ունի նաև ար-
տիճուկ, գորտապաշար, մարեմխոտ անունները²⁹: Նրանք թարգմանել են
Կանկար տեղանունը և այն դարձրել Կենգերլու, որը թուրքերենի արտի-
ճուկն է:

Կիլիկիայում՝ Հալեպի մահանգի Մարաշի գավառում, Ջեյթունի գավա-
ռակում, Ֆռնուս գյուղաքաղաքից հյուսիս, Ֆռնուսի Սբ. Կարապետ վանքից
ոչ հեռու, Դրախտիկ լեռան լանջին գտնվող Գոշող գյուղի անունը նրանք
թարգմանել են Չաղաղան, որը նշանակում է նաև ճշող, բղավող, աղմկող³⁰:

Արևմտյան Հայաստանում, Էրզրումի մահանգի Էրզրումի գավառի

28 Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Եր. 1973, էջ 515:

29 Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, Եր., 1976, էջ 688:

30 Тюрецко-русский словарь, М., 2005.

Քղիի գավառակում, Քղի քաղաքից 33 կմ հեռավորությամբ դեպի հյուսիս-արևելք, Արածանի (Արևելյան Եփրատ) գետի ձախ կողմում գտնվող Խնձորոտ գյուղի անունը թարգմանել են Էլմայի, Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Բասեն գավառում գտնվող Տանձուտ գյուղի անունը՝ Արմըտլու:

Պատմական Փոքր Հայքում, Անտիպոնտական լեռնահամակարգում, Ալիս (Հալիս) գետի աջ ափից ոչ մեծ հեռավորության վրա, Սեբաստիա (Սվազ) քաղաքից հյուսիս-արևմտյան ուղղությամբ գտնվող Աստղիկ լեռնագագաթի անունը նրանք թարգմանել են Յըլդըզդադ, որում Յըլդըզ նշանակում է աստղ, դաղը՝ լեռ: Աստղիկ լեռնագագաթի մասին հիշատակություն կա Ղ. Ինճիճյանի մոտ³¹: Յըլդըզ են անվանափոխել նաև Ալիս գետի աջակողմյան Աստղիկ կոչվող վտակը, որը հոսում է Սեբաստիա քաղաքից հյուսիս-արևմուտք ընկած շրջանով և մայր գետին միանում Սեբաստիա քաղաքից մոտավորապես 20 կմ հեռավորությամբ դեպի արևմուտք: Ըստ Ղ. Ինճիճյանի՝ գետը սկիզբ է առնում Սեբաստիայի գավառի Յըլդըզ էլի կատարից, որը նշանակում է աստղ: Սրանից էլ առաջացել է Աստղիկ գետի անունը: Գետի ջուրն աշխատեցնում է շատ ջրաղացներ և անցնելով Սև հողեր կոչվող գերեզմանատան մոտով, խառնվում է Կզըլ-իյմաք գետին³²: Իսկ ըստ կիսաավանդական պատմության՝ Աստղիկ գետի հովտում էր գտնվում Միհրդատ Պոնտացու (1-ին դ. մ.թ.ա.) գանձատունը³³: Գետի անվան ծագման հետ բնակչությունը կապել է ավանդություններ և առասպելներ: Ռուսական 1: 500000 և 1: 200000 մասշտաբների քարտեզներում՝ Յըլդըզ-Իրմակ, որում Իրմակը նշանակում է գետ:

ա) Քաղաղրյալ տեղանունների դեպքում նրանք թարգմանել են անվան քաղաղրիչները:

Այսպես՝ Պատմական Փոքր Հայքում, Սեբաստիայի նահանգի Սեբաստիայի գավառում, նրա արևելյան մասում, Տերիկի գավառակում, Տերիկ քաղաքի մոտակայքում գտնվող զուտ հայաբնակ Ծակքար գյուղի անունը նրանք թարգմանել են Դելիքլիդաշ (դելիք=ծակ + դաշ=քար), Դելիքլիդաշ են թարգմանել նաև մույն գավառակի Բենկա գյուղաքաղաքի և Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգի Ակն քաղաքի միջև գտնվող Ծակքար քարաժայռը, որը ճեղքված է, այդ ճեղքով մարդիկ են անցնում:

Արևմտյան Հայաստանում Բիթլիսի նահանգի Մուշի գավառում, Մուշ քաղաքից հարավ-արևմուտք գտնվում է Ծակքար քարաժայռը, որի մեջը

31 Ղ. Ինճիճյան, Նոր Հայաստան, Վենետիկ, 1806 թ., էջ 294:

32 Ղ. Ինճիճյան, նշվ. աշխ., էջ 285:

33 Թ. Հակոբյան, Սո. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան., նշվ. աշխ., հ. 1, Եր. 1986, էջ 345:

փորվել և բարձր ու լայն անցում է բացվել: Այստեղ դրանից բացի անցանելի այլ ճանապարհ չկա: Ծակքար քարաժայռը նրանք թարգմանել են Դելիք-լուկայա, որում կայան նշանակում է ժայռ:

Արևմտյան Հայաստանում, Էրզրումի մահանգի Էրզրումի գավառում, Կարին քաղաքից արևելք, Վերին Բասեն գավառակում գտնվող Զյոփրի-քյոյ գյուղի դիմաց՝ Երասխ (Արաքս) գետի վրա, նրա ձախակողմյան Մուրց վտակի գետախառնուրդում, Հայոց Վաղարշ Բ Արշակունի թագավորի կողմից 2-րդ դարում կառուցվել է 7 կամար ունեցող և մինչև օրս կանգուն ու գործող հույակապ մի կամուրջ՝ Հովվի կամուրջ անվամբ, որը թուրքերը թարգմանաբար անվանափոխել են Չոբան քյոփրի (չոբան=հովիվ, քյոփ-րի=կամուրջ): Կամրջից ոչ հեռու նշմարվում են Վաղարշավան քաղաքի ավերակները:

Կիլիկիայում, Հալեպի մահանգի Մարաշի գավառում, Ջեյթուն գյուղա-քաղաքից փոքր-ինչ հյուսիս-արևմուտք ընկած Կոտորածի ձորը, որտեղով հոսում է Ջեյթունի գետի վտակներից մեկը, նրանք թարգմանել են Դըրըմ-դերեսի կամ Դրան-դերեսի (դըրըմ կամ դրան նշանակում է կտրող, դերեսի՝ ձոր): Կոտորածի ձոր անունը տրվել է ձորին այն բանից հետո, երբ Օսմանյան կայսրությունը, որոշելով իսպառ վերացնել Ջեյթունի անկախությունը, 1862 թ. այստեղ է ուղարկել Ազիզ փաշայի մեծաթիվ բանակը: Սակայն այս ճակատամարտում ևս, ինչպես և մախորդ բոլոր մարտերում, հաղթանակ են տարել զեյթունցի հերոս հայերը, որոնք այդ ձորում ոչնչացրել են 750 թուրքական զինվոր: Դակատամարտից հետո այդ անանուն ձորն ստացել է Կոտորածի ձոր անունը:

Հայկական լեռնաշխարհում, Անտիպոնտական լեռնահամակարգում, Արևմտյան Եփրատ և Շորոխ գետերի միջև, Կարին (Էրզրում) և Բաբերդ քաղաքներն իրար միացնող ճանապարհի վրա՝ Կապույտ լեռներում գտնվող Կապույտ լեռնագագաթը նրանք թարգմանել են Գյոքդաղ, որում Գյոքը նշանակում է կապույտ, իսկ դաղը՝ լեռ:

Տրապիզոնի մահանգի հարավում սկսվող և հյուսիսային ուղղությամբ հոսող ու Տրապիզոն քաղաքից արևելք Սև ծովը թափվող Սև գետի անունը թարգմանել են Կարադերե (կարա նշանակում է սև + դերե՝ գետ, ձոր): Այս գետի հովտում մինչև 1915 թ. կար գուտ հայաբնակ 36 գյուղ:

Հայկական լեռնաշխարհում, Հայկական պար լեռնահամակարգում, Մեծ Մասիս (Մեծ Արարատ) լեռից արևմուտք գտնվող Վանք լեռը թարգմանել են Դաշքիլիսա (դաշ նշանակում է քար, լեռ + քիլիսա՝ եկեղեցի):

Պատմական Փոքր Հայքում, Մեքաստիայի մահանգում, Մեքաստիայի գավառի, Ջառայի գավառակում, Ջառա գյուղաքաղաքից 10 կմ հեռավորու-

քյամբ դեպի արևելք գտնվող Քարհատ գյուղանունը նրանք թարգմանել են Թաշլըղ, որ նշանակում է քարոտ տեղ:

Արևմտյան Հայաստանում՝ Վանի նահանգի Վանի գավառում, հնում՝ Մեծ Հայքի Ռշտունիք գավառում, Վանա լճից հարավ ընկած, Արտոս լեռան հյուսիս-արևելյան ստորոտում գտնվում է սպիտակավուն սրբատաշ քարով կառուցված Սպիտակ վանքը: Ըստ պահպանված ավանդության՝ Սպիտակ վանք է կոչվել այն պահից, երբ Լենկթեմուրի հրոսակներից մի սևամորթ զինվոր հարվածել է վանքի դռանը. դուռն անմիջապես սպիտակել է, ու այդ հրաշքից սարսափած հրոսակները թողել, հեռացել են: Վանքի անունը թուրքերը թարգմանել են Աղբիլիսա, որի առաջին բաղադրիչը՝ Աղը, նշանակում է սպիտակ + քիլիսա՝ եկեղեցի:

Հայկական լեռնաշխարհում, Հայկական պար լեռնահամակարգի Այծպտկունք լեռնագագաթից հյուսիս-արևելյան ուղղությամբ, Եփրատ գետի ու Արաքսի վերին հոսանքի Մուրց վտակի միջև ընկած Ուղտապարանոց կոչվող լեռնաշղթան թարգմանել են Դեվերոյնի (դեվն նշանակում է ուղտ + բոյնի՝ պարանոց): Վ. Քոսյանը հիշատակում է Տեվե Պոյուն գրելաձևով և տեղադրում Կարին քաղաքի շրջանում, Սուրբ Նշան բլրին կից և ապա ավելացնում, որ այս լեռան վրայով են անցնում Բասեն և Պարսկաստան տանող ճանապարհները³⁴:

Պատմական Փոքր Հայքի հյուսիս-արևելյան կողմում, Գայլ գետի ավին, Նիկոպոլիս-Ջիմարա բնակավայրերն իրար միացնող ճանապարհի վրա, հռոմեական ճանապարհացույց Պետինգերյան քարտեզում նշանակված Եղեգառիճ ավանը և ամրոցը նրանք թարգմանել են Կամբշիղերե (կամբշ նշանակում է եղեգ + դերե՝ գետ, ձոր):

Հայկական լեռնաշխարհում, Եփրատ գետի ավազանի աջակողմյան Ոսկեգետակ վտակը Խարբերդի նահանգի արևմտյան մասում, Արաքլիր քաղաքից դեպի հարավ-արևելք ոչ մեծ հեռավորության վրա, միանում է մայր գետին: Հովտում տարածված բարեբեր հողատարածքների համար գետը ստացել է Ոսկեգետակ անունը, որի առաջին բաղադրիչը՝ Ոսկին, թուրքերը թարգմանել են սարը, որը բառացի նշանակում է դեղին, իսկ գետակը փոխարինել են չիչեք բառով, որ նշանակում է ծաղիկ, և Ոսկեգետակը դարձրել են Սարըչիչեք:

Հայկական լեռնաշխարհում, Եփրատի ձախակողմյան Մանանաղի գետ վտակը, որն ըստ Ն. Ադոնցի, հետագայի Թուզլուդարասին³⁵ է (թուզլու

34 Վ. Քոսյան, Բարձր Հայք, հ. Ա, Վիեննա, 1925, էջ 1:

35 Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, С.-П., 1908, էջ 50:

նշանակում է աղուտ + դարասի=գետ, ձոր), և թուրքական անվանափոխման արդյունք է:

Հայկական լեռնաշխարհի Բյուրակն-Մնձուրյան լեռնաշղթայում գտնվում է իր չափերով բավականին ընդարձակ հրաբխային մի լեռնազանգված՝ Բյուրակնյան լեռներ, Հազար ակունք, Հազարալճյան լեռներ անուններով: Հ. Կարնեցու վկայության համաձայն՝ Հազար ակունք անվամբ հիշատակում է Հովհաննես Թլկուրանցին³⁶: Լեռներում առկա են բազմաթիվ բարձրադիր սարավանդներ ու կոներ: Վերջիններից ամենաբարձրը դեռևս հնում Սրմանց անվամբ հայտնի լեռնագագաթն է, որը Ղ. Ալիշանը³⁷, Լեոն³⁸, Հ. Կարնեցին և այլոք հիշատակում են մաս Սերմանց անվամբ: Լեռնագագաթի տարածքում հայտնաբերվել է ուրարտական սեպագիր արձանագրություն (8-րդ դար մ.թ.ա.): Լեռներին տալով նրա Հազարալճյան տարբերակի թարգմանությունը՝ Բինգյոլ, որում Բինը նշանակում է 1000, գյոլը՝ լիճ, նրանք Սրմանց լեռնագագաթը ևս անվանել են Բինգյոլ:

բ) Ուշագրավ է, որ հայկական քաղաքայալ արմատներով տեղանունները թուրքերը երբեմն լրիվ չեն թարգմանել, այլ բավարարվել են արմատներից մեկի թարգմանությամբ:

Այսպես՝ Հայկական լեռնաշխարհում, Անտիտավրոս լեռնահամակարգում, պատմական Փոքր Հայքի Մալաթիա քաղաքից դեպի հարավ գտնվող Վանքասար լեռնաճյուղի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մենաստանի մոտակայքում ընկած հատվածը նրանք անվանել են Վանք դաղ:

Արևմտյան Հայաստանի էրզրումի նահանգում, Կարին քաղաքից 48 կմ հեռավորությամբ դեպի արևմուտք գտնվող Նորգեղ կամ Նորշեն գյուղանվան մեջ թարգմանել են անվան մեկ բաղադրիչը՝ Նորը, և գյուղի անունն անվանափոխել Ենիգեղ: Այս թարգմանել են մաս գեղ բաղադրիչը և գյուղի անունը դարձրել Ենիքենդ: Ենիգեղ անվամբ են անվանափոխել մաս պատմական Փոքր Հայքի Սեբաստիայի նահանգի Շապին Գարահիսարի գավառի Նորշեն հայկական գյուղանունը: Բոլորովին այլ ձևով են նրանք վարվել Արևմտյան Հայաստանի Վանի նահանգի Վանի գավառի Արծկեի գավառակում, Վանա լճից 5 կմ հեռավորությամբ դեպի հյուսիս, Սիփան լեռան հարավային ստորոտներում, Սբ. Աստվածածին ուխտատեղիի մոտ գտնվող Նորշեն գյուղի անվան հետ: Նորշեն հայկական բառին նրանք նախ ավել-

36 Հ. Կարնեցի, Տեղագիր Վերին Հայոց, կազմեց Կ.Կոստանեան. Վաղարշապատ, 1903, էջ 58, էջ 68, ծանոթագրություն:

37 Ղ. Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855, էջ 9:

38 Լեո, Հայոց պատմություն, հ. 1, Թիֆլիս, 1917, էջ 143:

լացրել են թուրքական «ջուկ» վերջածանցն ու այն դարձրել Նորշենջուկ³⁹, Հ. Լինչը վկայում է Նորշենճիկ գրելաձևով⁴⁰: Ապա տել են անվան «ե» տառը, ինչպես նաև ալլափոխելով տեղանունը և հարմարեցնելով իրենց արտասանությանը, ի վերջո վերափոխել են Նորշենջուկ կամ Նորսնջըղ խեղաբյուրված անուններով:

զ) Թարգմանությունների ժամանակ հաճախ անտեսել և դուրս են բողել բաղադրյալ տեղանվան մեկ բաղադրիչը:

Այսպես՝ Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի Անձևացիք գավառում, Հայկական լեռնաշխարհի Վանա լճից հարավ, Արտոս լեռնագագաթից հարավ-արևելք, Վան քաղաքից 42 կմ հարավ, Կանգվար ամրոցից մոտավորապես 10 կմ արևմուտք, Հնձամիս կոչվող վայրում գտնվում էր Հոգյաց վանքը: Այն տեղադրված էր Տիգրիս գետի ափին, Կասրիկ վտակի միախառնման տեղում, Վան, Նորադուզ, Շատախ ճանապարհների հատման վայրում: Վանքի կառուցման մասին պահպանված ավանդության համաձայն՝ Մարիամ Աստվածածինը երևացել է Բարդուղիմեոս Առաքյալին և հրամայել այդտեղ վանք կառուցել՝ հանուն իր հոգու փրկության: Կառուցված վանքի եկեղեցին կոչվում է Աստվածածին, որի բեմի տակ փորագրված է Աստվածածնի պատկերը: Պատմահայր Մովսես Խորենացուն է վերագրվում վանքի կառուցման մասին պահպանված հիշյալ ավանդությունը⁴¹: Հ. Ոսկյանը մանրամասն նկարագրում է վանքը և գրում. «Տաճիկները վանքն անվանում են Քիլիսե կամ Տեր Միրենե»⁴²: Վանքը վերջին այս անուններով վկայում է նաև «Հանդես Ամսօրյա»-ն⁴³:

Հոգյաց վանքի անունից նրանք դուրս են բողել տեղանվան դժվար քարգմանվող Հոգյաց բաղադրիչն ու քարգմանել են միայն վանք բառը՝ այն դարձնելով Քիլիսե, որը բառացի նշանակում է եկեղեցի, և այդ անվամբ էլ անվանափոխել են Հոգյաց վանքը: Այս վանքն իր աշխարհագրական անառիկ դիրքի շնորհիվ ծառայել է նաև որպես ամրոց: Հոգյաց վանքը դեռևս 4-րդ դարում եպիսկոպոսանիստ էր ու հետագայում էլ հանդիսանում էր ձեռագրերի նկարազարդման մեծ կենտրոն և ուներ ձեռագիր մատյանների հարուստ գրադարան: Հոգյաց վանքի մոտ էր գտնվում Լուսավորչի անվամբ

39 В. Маевский, Ванский вилает, Военно-статистическое описание, Тифлис, 1901, էջ 268:

40 Հ. Ֆ. Բ. Լինչ, Հայաստան, հ. 2, Պոլիս, 1914, էջ 369:

41 Հայկական սովետական հանրագիտարան, հ.6, Եր., 1980 թ., էջ 499 :

42 Հ. Ոսկյան, Վասպուրական-Վանի վանքերը, մաս 1-3, Վիեննա, 1940-47, էջ 759-778:

43 Հանդես Ամսօրյա, Վիեննա, 1889, էջ 236:

մի աղբյուր:

դ) Թարգմանությանը զուգահեռ երբեմն աշխարհագրական օբյեկտներին տվել են բուրբակյան նոր անուններ:

Օրինակ՝ Կիլիկիայում, Հալեպի նահանգի Մարաշի գավառում, գավառի կենտրոն հանդիսացած Մարաշ քաղաքից 25 կմ արևմուտք, Ջեյհան կամ Պյուռաֆոս գետի աջակողմյան շրջանում գտնվող և 400 տուն բնակիչ ունեցած հայաբնակ Մեծ գյուղի անունը նրանք թարգմանել են Բյույուքբյոյ (բյույուք=մեծ, բյոյ=գյուղ) և Ենիջեկալե, որը նշանակում է Նորաբերդ, ինչպես նաև գյուղին տվել են Խրիստիանքյոյ (խրիստիան=քրիստոնյա, բյոյ=գյուղ) անվանումը:

Հայկական լեռնաշխարհում՝ Հայկական Տավրոս լեռնահամակարգի արևմտյան հատվածում, Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգում, Խարբերդ քաղաքից մոտավորապես 23 կմ հարավ-արևելք ընկած մի գոգավորությունում էր գտնվում Ծովուց լեռներով շրջափակված Ծովք լիճը, որի հարավ-արևմտյան ափին ժայռեղեն կղզու վրա էր Ծովք կամ Կաթողիկոսի քար կոչվող բերդը (ամրոց, դղյակ): Նրանք Ծովք լիճը թարգմանել են Գյոլջիկ, ինչպես նաև՝ անվանել Կազանգյոլ (կազան նշանակում է կաթսա + գյոլ՝ լիճ): Ծովք դղյակում 12-րդ դարում ծնվել են Ներսես Շնորհալիև և նրա եղբայր Գ. Պահլավունի կաթողիկոսը, որը Ծովք ամրոց-դղյակը դարձրել էր կաթողիկոսանիստ:

Հայկական լեռնաշխարհում, Վանա լճից հյուսիս-արևելք ընկած, Արածանի գետի վերին հոսանքի շրջանում Ծաղկանց կամ Ծաղկի լեռներում գտնվող Ծաղկանց կամ Ծաղկեո լեռնագագաթի անունը նրանք թարգմանել են Ալադալ (ալ նշանակում է վարդագույն կարմիր + դալ=լեռ), որը նրան տրվել էր՝ հավանաբար նկատի ունենալով լեռնագագաթի խայտաբղետ ծաղկաշատությունը:

ե) Երբեմն թարգմանության հետ նրանք նաև բուրբակյան բառ են ավելացրել տեղանվան կազմության ժամանակ:

Այսպես՝ Հայկական լեռնաշխարհում, Բյուրակն-Մնձուրյան լեռնաշղթային պատկանում և Արևմտյան Հայաստանի Էրզրումի նահանգի Քլի գյուղաքաղաքից 10 կմ հեռավորությամբ, արևելքից արևմուտք ձգվում է Գալլախազուտ կամ Խաչ կոչվող լեռնաշղթան՝ իր նույնանուն՝ Գալլախազուտ լեռնագագաթով, որի բարձրությունը մոտ 3300 մ է: Գալլախազուտ նշանակում է գալլախազ պարունակող կամ կայծքարով հարուստ վայր: Գալլախազը ապակու արդյունաբերության և խճանկարչության մեջ օգտագործվող կայծքարն է: Գալլախազուտ լեռնագագաթի անունը նրանք վերանվանել են Բաղըր կամ Բաղըր բաբա, որի բաղըրը, ըստ Հր. Աճառյանի,

նշանակում է ընդերք⁴⁴, իսկ բաբան՝ ընտիր, պատվական, ինչպես նաև հայր: Հ. Ա. Պօհճալեանը բաղըր բառը բացատրում է որպես կուրծք, լանջ, գիրկ⁴⁵: Արիստակես Լաստիվերցին լեռնագագաթի մասին գրում է. «Ի հատուածս լերինն Պախրայ, որ այժմ կոչի Գայլախագուտ, առաջին հարցն աւան ինչ էր զոր Բագմաղբիւր կոչեն. ուր զԱստուածային նշանն բագմապայծառ վայելչությամբ կանգնեալ էին. որ և զանուն գեղջն ի նոյն փոխեալ՝ Խաչ անուանեն մինչև ցայսօր»⁴⁶: Լեռան լանջին գտնվող Բագմաղբյուր կամ Խաչ ավանը 11-րդ դարում Թոնդրակյան շարժման հայտնի կենտրոններից էր: Ն. Արմենցն ուշ շրջանում Խաչ (Խաչքոյ) գյուղը հիշատակում է Թուզլու գետի հովտում⁴⁷: Գայլախագուտ լեռնագագաթի մասին Մ. Չամչյանը գրում է. «... ի հատուածս լերինն Պախրայ, որ և Գայլախագուտ ասի, աւան մի Բագմաղբիւր կոչեցեալ. որ կանգնեալ կայր խաչ պայծառ յօրինեալ, և էր վայրն այն իբր ուխտատեղի. յորմէ և գիւղն կոչիւր երբեմն Խաչ»⁴⁸: Խաչ անվանը նրանք ավելացրել են թուրքական քոյո՝ գյուղ նշանակող բառը և տեղանունը դարձրել Խաչքոյ, որից էլ իրենց Հաչքոյ տեղանունը:

զ) Հայոց տեղանունների ծագման հայկական արմատները վերացնելու գործընթացում բաղադրյալ բառերի դեպքում նրանք դիմել են նաև տեղանվան բառարմատներից մեկը թարգմանելու, մյուսը՝ իրենց լեզվական արտասանությանը հարմարեցնելու մեթոդին:

Այսպես՝ Հայկական լեռնաշխարհում, Արևմտյան Հայաստանի Էրզրումի նահանգի Երզնկայի գավառում, Երզնկա քաղաքից 50 կմ հեռավորությամբ դեպի հարավ-արևմուտք, Կամախի գավառակում գտնվող Կամախի կիրճը, որտեղով անցնում էր Ակն քաղաքն Արաբկիր և Խարբերդ քաղաքների հետ միացնող ճանապարհը, նրանք դարձրել են Քեմախ բողազի: Այստեղ Կամախ բառը նրանք հարմարեցրել են իրենց արտասանությանը և դարձրել Քեմախ, իսկ կիրճը՝ թարգմանել բողազ: Սա այն վայրն է, որտեղ 1915 թ. միայն մայիսի 28-ին թուրքերը անխնա կոտորել են Երզնկայի գավառից տեղահանված 25 000 հայի և կիրճը դարձրել հայերի անթաղ գերեզմանատեղի:

Հայկական լեռնաշխարհում, Արևմտյան Եփրատ գետի վրա, Արևմտյան

44 Հր. Աճառեան, Թուրքերէնէ փոխառեալ բառեր հայերէնի մէջ, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Գ, Մոսկուա-Վաղարշապատ, 1902, էջ 284, 286:

45 Հ. Ա. Պօհճալեան, «Թրքերէնէ-հայերէն Առձեռն բառարան», Ստամբուլ, 1996:

46 Ա. Լաստիվերցի, Պատմություն, Եր., 1971, էջ 155:

47 Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, С. П., 1908, էջ 49-51:

48 Մ. Չամչյան, Պատմություն հայոց, Վենետիկ, 1784, էջ 890:

Հայաստանում, Էրզրումի նահանգի Դերջան կամ Մամախաբունի գավառակում, հին Կոթեր ավանի մոտակայքում, նրանից շուրջ 2 կմ արևմտյան ուղղությամբ, Ներսես լեռից գրեթե մույնքան արևելք, Դերջան գետի Կփրատին միանալու վայրում գտնվող և 7 կամար ունեցող հայկական Կոթերի կամուրջն անվանափոխել են Քեթուր քյոփրյու: Այս տեղանվան մեջ Կոթեր բառը, հարմարեցնելով իրենց արտասանությանը, դարձրել են Քեթուր, իսկ կամուրջ բաղադրիչը թարգմանել են քյոփրի: Այս, այլափոխությունների արդյունքում հասել են նրան, որ հնուց հիշատակվող հայկական Կոթերի կամուրջ տեղանունը դարձել է Քեթուր քյոփրյու, որը հայկական իմաստից զուրկ անվանում է:

Հայկական լեռնաշխարհում, Այծպտկունք լեռնագագաթի լանջերից սկիզբ առնող և Բասենի դաշտով հոսող ու Արևմտյան Հայաստանի Էրզրումի նահանգի Էրզրումի գավառի Հասանկալա (Բասեն) քաղաքից ոչ մեծ հեռավորությամբ դեպի արևելք մայր գետի մեջ թափվող, հնում Մուրց անվամբ հայտնի գետի անունը հարմարեցրել են իրենց արտասանությանը Մյուսսու ձևով: Հյուբշմանը Մուրցը մույնացնում է Բասենի ջուր գետի հետ⁴⁹: Իսկ Ն. Ադոնցը նշում է. «Մուրցը համարվում էր Արաքս գետի սկիզբը (ակունքը), ուստի և ոմանք այն կոչում էին նաև պարզապես Արազ (Արաքս)»⁵⁰: Ա. Խուդաբաշևը Արաքս (Արազ) անվան մասին գրում է, որ արաբները, թուրքերն ու պարսիկները անվանում են Արազ, իսկ հայերը մինչև օրս էլ պահպանել են գետի հին անունը՝ Երասխ⁵¹: Հակոբ Կարնեցին գրում է. «... ընդ Արազս և ոլորտս տալով, գնացեալ հասանէ երկիրն Երէվանայ և Դվնայ և ընդ ստորտովն մեծին Մասիսոյ. և գան ջուրք Այրարատեան գաւառացն և խառնին ընդ Արագն ...»⁵²: Ղ. Ինճիճյանը գետը հիշատակում է նաև Հասանդալա անվամբ⁵³: Նույն անվամբ հիշատակում է նաև Ա. Աբեղյանը⁵⁴: Հ. Հյուբշմանը գետի Մուրց անունը հայերեն մուրց՝ բռունցք նշանակող բառի հետ կապելը համարում է անհավանական⁵⁵: Նրանք այլափոխել են նաև գետի Բասենի ջուր տարբերակը և դարձրել Բասինսու, որին ավելացրած սու-ն նշանակում

49 Hubschmann, Die altarmenischen Ortsnamen Strazburg, 1904, էջ 369:

50 Н. Адонц, նշվ. աշխ., էջ 20:

51 А. Худабашев, Обозрение Армении в географическом, историческом и литературном отношениях, СПб, 1859, էջ 18-19:

52 Հ. Կարնեցի, նշվ. աշխ., էջ 50:

53 Ղ. Ինճիճյան, նշվ. աշխ., էջ 25:

54 Ա. Աբեղյան, Դասագիրք աշխարհագրության, Դ գիրք, Պոլիս, 1921, էջ 27:

55 Հ. Հյուբշման, Հին հայոց տեղւոյ անունները, Վիեննա, 1908, էջ 440:

է ջուր: Գետի վրա կար եռակամար քարաշեն կամուրջ:

2) *Երբեմն հայկական տեղանվանը նրանք պարզապես թուրքական բաղադրիչ են ավելացրել տեղանվան սկզբից կամ վերջից:*

Այսպես՝ Արևմտյան Հայաստանում, Էրզրումի նահանգի Երզնկայի գավառի Կամախի գավառակում գտնվող Վանք գյուղանվան վերջում ավելացրել են դերեսի՝ գետ կամ ձոր նշանակող բառը և այն դարձրել Վանքդերեսի՝ երկլեզվյան խառը կազմությամբ տեղանուն:

Հայկական լեռնաշխարհում, Մեծ Հայքի Վասպուրական աշխարհում, Վանա լճից արևելք, Վարագա լեռնաշղթայի արևմտյան հատվածում գտնվող վասպուրականցիների ամենասիրելի սրբատեղի Վարագ լեռնագագաթի անվանն ավելացրել են թիբեն բառն ու այն դարձրել՝ Վարագթիքեն (թիբա նշանակում է պատառ): Վարագա Լեռնագագաթի տարածքում հայտնաբերվել է մի քանի սեպագիր արձանագրություն, իսկ լեռնագագաթի վրա Աստղկան բերդն է:

Հայկական լեռնաշխարհում, Մեծ Հայքի Բարձր Հայք աշխարհի Եկեղյաց գավառում, Երզնկայի դաշտում, Երզնկա քաղաքից մոտավորապես 20 կմ արևելք, Վժան գյուղից ոչ հեռու գտնվող, Գ. Սյուրմենյանի կողմից Վժան հայկական անվամբ հիշատակված լճակի անվանն ավելացրել են թուրքական գյոլ՝ լիճ նշանակող բաղադրիչը և այն դարձրել Վժանգյոլ⁵⁶: Նրանք Վժան տեղանունն առհասարակ իրենց արտասանական այլափոխմանն են ենթարկել Ուջան ձևով:

Կիլիկիայում, Կիլիկյան Տավրոս լեռնաշղթայում, Հալեպի նահանգի Մարաշի գավառի Ջեյթուն գյուղաքաղաքից ոչ մեծ հեռավորությամբ տարածվող Յոթնեղբայր լեռների անվանը նրանք ավելացրել են չավտար բառը, որը հացահատիկի տեսակ է՝ հաճար, և լեռների անունը դարձրել Յոթնեղբայր Չավտարի:

3) *Անվանափոխություններ իրականացրել են նաև հայկական տեղանուններն աղավաղելու և դրանց նոր իմաստավորում տալու միջոցով:*

Արևմտյան Հայաստանի Վանի նահանգի Արճակի գավառակում, Վանա լճից արևելք ընկած Արճակ լճի արևելյան ափամերձ շրջանում, Արճիշակ գետի աջափնյա հարթավայրում գտնվող Խառակոնիս գյուղը, որտեղ պահպանվել է ուրարտական Իշպուինի և նրա որդի Մենուա թագավորների սեպագիր արձանագրություններից մեկը, նրանք անվանափոխել են Կարագյունդուզ, որում կարան նշանակում է՝ սև, գյունդուզը՝ ցերեկ: Պահպանված ավանդության համաձայն՝ Խառակոնիսում է ծնվել 16-րդ դարի հայ հանճարեղ բանաստեղծ Նահապետ Բուշակը:

56 Գ. Սյուրմենյան, Երզնկա, Գահիրե, 1947, էջ 431:

Արևմտյան Հայաստանի Վանի նահանգում, Վան քաղաքից հյուսիս, Ակոբի լեռնաճյուղում է գտնվում Միերի դուռ քարաժայռը, որտեղ պահպանվել է ուրարտական 80 տողից բաղկացած սեպագիր արձանագրություն, որի վրա գտնվում է հայտնի Ամրական քարանձավ բերդը: Այդ քարաժայռը Միերի դուռ է կոչվում կապված հայոց «Սասնա ծռեր» դյուցազներգության հերոս Փոքր Միերի հետ, որն իբրև աշխարհի չարությունից հոգնած ապաստանել է այստեղ: Նրանք, նախ՝ Միերի դուռ հատուկ անվան առաջին բաղադրիչն իրենց արտասանական այլափոխմամբ դարձրել են Մյուի-րի, իսկ հատուկ անվան երկրորդ բաղադրիչը՝ դուռը, թարգմանել են քափը և տեղանունն այլափոխել Մյուի-րի քափը՝ հայերի համար օտարահունչ, իմաստագուրկ և ոչինչ չստող անվամբ:

Արևմտյան Հայաստանում, Խարբերդի նահանգի Խարբերդի գավառում Ակնի գավառակում, Ակն քաղաքից փոքր-ինչ հարավ-արևելք, Արևմտյան Եփրատ գետի բարձրադիր ափին գտնվող (հնում մատենադարան), շուրջ 10 եկեղեցի ու մատուռ ունեցած Կամարակապ գյուղի անունը նրանք դարձրել են Քեմերդապ: Պահպանված ավանդություններից մեկի համաձայն՝ գյուղը Կամարակապ է կոչվել հնում գյուղի տեղում եղած անտառի հյդեհումից առաջացած բոցի՝ երկնքում հսկայական կամար առաջացնելու պատճառով: Ըստ մի այլ ավանդության՝ Կամարակապ նշանակում է կարմիր կապ, որն իբրև ծագել է հարսին ու փեսային իրար հետ կարմիր ժապավենով կապելու սովորությունից: Նրանց անվանափոխած Քեմերդապի առաջին բաղադրիչը՝ քեմերը, հայերեն կամար բառի աղավաղումն է՝ նրան ավելացրած կապ բառի արտասանական այլափոխությամբ առաջացած դապ անվանաձևը:

Արևմտյան Հայաստանում, Էրզրումի նահանգում, Կարին (Էրզրում) քաղաքից փոքր հեռավորությամբ դեպի հյուսիս-արևելք, Արևմտյան Եփրատ գետի վերին հոսանքի ձախափնյակում էր գտնվում հայկական Մատուռկա գյուղը, որը թուրքերը հարմարեցնելով իրենց արտասանությանն այլափոխել են Մուդուրգա, ինչ ձևով և նշանակված է Ռուսական 5-վերստանոց քարտեզում: Նրանք գյուղանունը դարձրել են նաև Մյուդյուրգե ձևով, ինչպես որ նշանակված է 1:200000 մասշտաբի Ռուսական տեղագրական քարտեզում: Մյուդյուրգե նշանակում է տնօրեն: Գյուղի արևելյան կողմում էր գտնվում Մատուռկա կամ Լուսավորչի վանքը: Վանքի ներսում կար ոչ խոր փոս, որտեղ, ըստ պահպանված ավանդության, մի գիշեր անց է կացրել Գրիգոր Լուսավորիչը: Վանքն ունեցել է վարժարան: Մատուռկա վանքում էին նստում Կարինի հոգևոր առաջնորդները:

Արևմտյան Հայաստանում, Էրզրումի նահանգի Էրզրումի գավառի

Խնուսի գավառակում գտնվող Խնուսի դաշտի նշանավոր Խաչալույս գյուղի անունը նրանք աղավաղել են՝ դարձնելով Հաչավուշ, որի երկրորդ բաղադրիչը՝ չավուշը, ըստ Հ. Աճառյանի նշանակում է տասնապետ, իսկ ըստ Հ. Ա. Պօհճալյանի բառարանի՝ նշանակում է «յիսնապետ, քաղաքապետական գործաւորներու՝ հսկիչ, գործաւորներու՝ պետ»⁵⁷:

Հայկական լեռնաշխարհում, Մեծրաց լեռնաշղթայի հարավային հատվածում, Սարիղամիշ քաղաքից մոտավորապես 15 կմ հարավ-արևմուտք, Վանք լեռան հյուսիս-արևմտյան կողմում գտնվող Սուրբ Խաչ լեռնագագաթի անվանը նրանք ավելացրել են թուրքական «ղաղ»՝ լեռ նշանակող բառը ու տեղանունը դարձրել Սուրբ Խաչղաղ, իսկ ըստ իրենց՝ Հաչղաղ: Սուրբ Խաչ լեռնագագաթի տարածքում հայերը կառուցել են 7 քարաշեն եկեղեցի: Լեռը Ռուսական 10-վերստանոց քարտեզում նշանակված է Սուրբխաչ, Ռուսական 1:200000 մասշտաբի քարտեզում՝ Սուլխսան, իսկ 1:500000 մասշտաբի քարտեզում՝ Սուլխանդաղ իմաստագրված անվամբ:

Մեծ Հայքի Աղձնիք նահանգում, Տատիկ գավառից հյուսիս, նոր ժամանակներում Արևմտյան Հայաստանի Բիթլիսի գավառում, Բաղեշ քաղաքից հարավ-արևելք, Վանա լճից հարավ-արևմուտք տարածվող Ազնվաց ձոր գավառի անունը կազմված է ազնիվ և ձոր բառերի համադրությունից, որը նրանք թարգմանել են Գյուզելդերե (գյուզել=գեղեցիկ + դերե=ձոր): Գյուզելդերե և Չայինա են անվանել նաև Տատիկ գավառակով հոսող Արևելյան Տիգրիս գետի աջակողմյան Տատիկ վտակի անտառապատ ձորահովիտը:

Արևմտյան Հայաստանի Վանի նահանգի Վանի գավառում, Վանա լճի հարավային ափին, Աղթամար կղզու դիմաց, Ոստան ավանից 7 կմ արևմուտք, քարքարոտ ժայռի վրա եղած Մանակերտ բերդաքաղաքի ավերակների և Պատականց գյուղի մոտակայքում՝ լեռնալանջի վրա էր գտնվում հնում՝ Մանակերտ, հետագայում՝ Քարադաշտ կոչվող գյուղը: Մանակերտի անունով Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի Վանա լճի հարավային ափամերձ շրջանում տարածվող Ռշտունիք գավառը, որի կենտրոնն էր Ոստան ավանը, միջին դարերում կոչվել է Մանակերտի գավառ: Ենթադրվում է, որ Մանակերտը կառուցել է ուրարտական Մենուա թագավորը և այն կոչել իր անունով: Գյուղի անունը հետագայում այստեղ ներխուժած թուրքերն այլափոխել են Կարադաշ:

Կիլիկիայում, Անտիտավրոս լեռնահամակարգում, Հալեպի նահանգի Մարաշի գավառում, Մարաշ քաղաքից հյուսիս-արևելք, Բերդուս բերդի մերձակայքում գտնվող հնում՝ Նուկրակ կամ Նուկրական, ինչպես նաև

57 Հ. Ա. Պօհճալեան, նշվ. աշխ.:

Նվիրական կոչված լեռան անունը նրանք աղավաղել են Նուրը Չաք (նուրը նշանակում է լույս, փայլ, ճառագայթ, սրբություն՝ արաբերեն, իսկ չաք-ը քուրքերեն նշանակում է խփի): Լեռը Նուկրական անուններով հիշատակում է Ղ. Ալիշանը, մա տեղադրում է Լեռնային Կիլիկիայում, Բերդուս բերդի սահմաններում և գրում. «...Հետագայում հայտնի է Նուրիակ անունով»⁵⁸: Լեռան մասին հիշատակություններ ունեն նաև Հ. Տեր-Ղազարյանը⁵⁹, Ս. Գունդստաբլը, վերջինս գրում է. «Եւ յայսմ ամի ժողովեցան զօրքն Պարսից.... եւ եկեալ անցին ... ի սահմանս Նուկրականն»⁶⁰:

Մեծ Հայքի Տայք աշխարհի Արայացփոր գավառի մեջ մտնող Բերդագրակ գավառակն ընկած էր Խոտրջուր և Պարխար գավառակների միջև, Սև ծովը թափվող Շորոխ գետի ու նրա վտակների հովտում, որոնց ափերին էին գտնվում գավառակի բազմաթիվ հայաբնակ գյուղերը: Դեռևս 4-8-րդ դարերում հիշատակվող Բերդագրակ գավառակը Մամիկոնյանների կալվածքն էր, 16-17-րդ դարերում՝ քուրքական տիրապետության ժամանակ, գավառակի հայ բնակչությանը բռնի մահմեդականացրել են, եկեղեցին վերածել մզկիթի, իսկ գավառակի անունը հարմարեցնելով իրենց արտասանությանն ալլափոխել են Փերթերթեք: Փերթերթեք էր անվանվում նաև գավառակի կենտրոն Շորոխ գետի ձախ ափին գտնվող հայաբնակ հին պատմական Բերդագրակ գյուղաքաղաքը, որը հետագայում մտնում էր Արևմտյան Հայաստանի Էրզրումի նահանգի, Էրզրումի գավառի Կիսկիմի գյուղախմբի մեջ: Բերդագրակի բնակիչները մինչև 20-րդ դարի սկզբները պահպանում էին հայկական անուններն ու սովորույթները:

Կարսի մարզի Օլթիի օկրուգում, Օլթի քաղաքից 40 կմ հյուսիս-արևելյան ուղղությամբ, Շորոխ գետի բարեբեր հովտում գտնվող և հնուց հայաբնակ Բանջրոտ կամ Բանջարոտ գյուղանունը նրանք հարմարեցնելով իրենց արտասանությանը դարձրել են Փանջուրթեք (փանջուր նշանակում է լուսանցույց, ինչպես նաև՝ շերտավարագույր)⁶¹:

4) Առավել հաճախ հայկական տեղանունները նրանք հարմարեցրել են իրենց լեզվական արտասանությանը:

Հայկական լեռնաշխարհում, Անտիպոնտական լեռնահամակարգին պատկանող և Արևմտյան Հայաստանի Էրզրումի նահանգի Երզնկա քա-

58 Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 195:

59 Հ. Տեր-Ղազարյան, Հայկական Կիլիկիա, Անթիլիաս, 1966, էջ 114:

60 «Սմբատ Գունդստաբլ հայոց և Ամսիգք Անտիոքայ» (հայերեն բնագրով և նրա ֆրանսերեն թագմանությամբ), Վենետիկ, 1876, էջ 128-129:

61 Կատարինե Կոնտակչյան (Քեյքի Գունդակչյան), Թուրքերեն-հայերեն բառարան, Եր., 2003:

դաքից մոտավորապես 18 կմ հյուսիս-արևելյան ուղղությամբ գտնվող Սուրբ Գրիգոր լեռների և լեռնանցքի անուններն աղավաղել են, որոնք 1:200000 մասշտաբի Ռուսական քարտեզում նշանակված են Սիպիկեր, իսկ Ռուսական 5-վերստանոց քարտեզում՝ Սիպիկոր ձևերով:

Արևմտյան Հայաստանի Բիթլիսի նահանգի, Խլաթի գավառակում, Վանա լճի արևմտյան բարձրադիր ափին, նրա հարավ-արևմտյան եզրին տեղադրված Դատվան գյուղաքաղաքից մոտավորապես 6 կմ հեռավորությամբ դեպի հյուսիս գտնվող Կծվակ գյուղանունը հարմարեցնելով և իրենց արտասանական այլափոխմանը ենթարկելով դարձրել են Քըզվագ: Հայկական Կծվակ գյուղանունը կապվում է Կայծակ տանուտերի անվան հետ, ինչպես նաև ստուգաբանվում է որպես կծու ակ՝ կծու ջուր ունենալու պատճառով⁶²: Կծվակ անունը հիշատակում է նաև Ա-Դո-ն⁶³: Գյուղի մերձակայքում գտնվող բլրի գագաթին դեռևս 20-րդ դարի սկզբներին պահպանվում էին միջնադարյան բերդի ավերակները:

Արևմտյան Հայաստանում, Վանի նահանգի Վանի գավառում, Շատախի գավառակում, Շատախ գյուղաքաղաքի հյուսիս-արևելյան կողմում գտնվող հայկական Ծառնոց գյուղանունը հարմարեցրել են իրենց արտասանությանը՝ Սարնու:

Արևմտյան Հայաստանում, Էրզրումի նահանգի Երզնկայի գավառում, Մամախաթունի գավառակում, Մամախաթուն գյուղաքաղաքից 15 կմ դեպի հյուսիս-արևելք գտնվող և 20-րդ դարի հայ ազատագրական շարժման խիզախ ներկայացուցիչ Սողոմոն Թեկերյանի ծննդավայր Ներքին Բագառիճ գյուղը, որը մեծ ավան էր՝ շուրջ 4000 բնակչությամբ, հնում մտնում էր Մեծ Հայքի Բարձր Հայք աշխարհի Դերջան գավառի մեջ և գտնվում էր Կարին-Տրապիզոն կարևոր նշանակություն ունեցող ճանապարհի վրա: Նրանք Բագառիճ ավանի անունը, հարմարեցնելով իրենց արտասանությանը, դարձրել են Փեքերիջ: Այս մասին Գ. Ջահուկյանը վկայակոչելով Ն. Ադոնցին⁶⁴ գրել է, որ Մեծ Հայքի Բարձր Հայք աշխարհի Բագառիճ անունը հետագայում դարձել է Փեքերիջ:

Մեծ Հայքի Տուրուբերան աշխարհի Ապահունիք գավառում, ըստ ավանդության, Հայկ նահապետի որդի Մանավազի կողմից կառուցված պատմական Հայաստանի ամենաամուր ու անառիկ բերդաքաղաքներից մեկը՝ հետագայում Արևմտյան Հայաստանի Բիթլիսի նահանգի Մուշի գավառի

62 Ն. Վարժապետյան, Տեղագրական, «Մասիս», Կ, Պոլիս, 1886, էջ 992:

63 Ա-Դո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթներ, Եր., 1912, էջ 89:

64 Н. Адонц, нзվ. աշխ., էջ 46-49:

հյուսիս-արևելյան մասում գտնվող Մանավազակերտը, որից և կրճատմամբ առաջացել է Մանագկերտ անունը, թուրքերը հարմարեցրել են իրենց արտասանությանը՝ այլափոխելով Մալագկիրտ ձևով, ինչպես և կոչվում է ներկայումս:

Արևմտյան Հայաստանում, Էրզրումի նահանգի Բայազետի գավառում, Դիադին քաղաքից մոտավորապես 30 կմ դեպի հյուսիս-արևմուտք, Արածանի գետի ձախ ափին գտնվող հայկական Գյուլաձոր գյուղի հայերին նրանք 1880-ական թվականներին արտաքսել են, հայերի տներում վերաբնակեցրել են թուրքերի, իսկ գյուղանունը այլափոխելով դարձրել են Գյուլեսոր: Ռուսական 1:200000 մասշտաբի քարտեզում՝ Գյուլյասոր, իսկ իր հին՝ Գյուլաձոր անվամբ նշանակված է Հ.Ֆ. Բ. Լինչի և Ֆ. Օսվալդի կազմած քարտեզի հայկական օրինակում⁶⁵:

Արևմտյան Հայաստանի Դիարբեքիի նահանգում 17-18-րդ դարերում Բերդակ կենտրոնով գոյություն ունեցած Բերդակ գավառակի անունը, որը հետագայում մտնում էր Խարբեքիի նահանգի մեջ, թուրքերը, հարմարեցնելով իրենց արտասանությանը, այլափոխել են Փերբեք:

Արևմտյան Հայաստանում, Էրզրումի նահանգի Էրզրումի գավառում, Կիսկիմի գավառակում հնուց գոտ հայաբնակ Չկնաջուր կոչվող գյուղի անունը հետագայում թուրքերը հարմարեցրել են իրենց արտասանությանը՝ Սըկնասուր ձևով: Այս գյուղի հայ բնակիչները, որոնց հետագայում նրանք բռնությամբ թրքախոս էին դարձրել, պահպանում են իրենց նախկին լեզվական մնացորդներն ու հայերին բնորոշ կենցաղային առանձնահատկությունները:

Կարսի մարզի Օլթիի օկրուգում, Օլթի քաղաքից մոտավորապես 30 կմ հարավ-արևելյան ուղղությամբ, Հյուսիսային (Հայկական) Տավրոս լեռնաշղթայի արևմտյան ստորոտում, Պարտեզ գետի ափին գտնվում էր Պարտեզ ավանը: Հնում Մեծ Հայքի Տայք աշխարհի Պարտիզացվոր գավառում, իսկ 20-րդ դարի սկզբին ռուս-թուրքական սահմանագլխին գտնված և գավառի կենտրոնը հանդիսացած Պարտեզ ավանի անունը նրանք դարձրել են Բարդիզ: Ավանը այս, ինչպես նաև Գազիլեռ անվամբ, նշանակված է Ռուսական 1:200000 քարտեզում, իսկ Ռուսական 10-վերստանոց քարտեզում նշանակված է Բարդուս ձևով:

Արևմտյան Հայաստանում, Խարբեքիի նահանգի Դերսիմի գավառում, Խարբեքի քաղաքից մոտավորապես 50 կմ հեռավորությամբ դեպի հյուսիս-արևմուտք, Արածանի գետի աջակողմյան Չմշկածագ վտակի ձախ կողմում

65 Հ. Ֆ. Բ. Լինչ և Ֆ. Օսվալդ, «Հայաստան և հարևան երկրներ» քարտեզի հայկական օրինակ, Թիֆլիս, 1915:

գտնվող և ինքնապաշտպանական հերոսական կռիվներ մղած ու իրավամբ «Քաջերի բույն» անուն վաստակած Չմշկածագ գյուղաքաղաքի անունը, որտեղ ծնվել է հայագգի Հովհաննես Չմշկիկ բյուզանդական կայսրը, թուրքերն աղավաղելով դարձրել են Չեմիշգեզեք: Իսկ Չմշկածագ գավառակում գտնվող մեկ այլ՝ Բագաբուն գյուղանունը, նրանք դարձրել են Փագափին: Տեղանունը Բագաբուն և Փագափին անվանումներով հիշատակում է Հ. Գասպարյանը⁶⁶:

Կիլիկիայում, Հալեպի նահանգի Մարաշի գավառի Անտրուն գավառակում, Կապան բերդից 4-5 կմ հեռավորության վրա, արգավանդ հարթավայրում գտնվող և Անտրուն գավառակի կենտրոն հանդիսացած Կապան գյուղաքաղաքի անունը նրանք իրենց արտասանությանն են հարմարեցրել Քեբան ձևով: Նման այլափոխման արդյունք է նաև Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգի Խարբերդի գավառում, Խարբերդ քաղաքից հարավ-արևմուտք, Եփրատ և Արածանի գետերի միախառնման վայրից հարավ, հնում՝ Մեծ Հայքի Չորրորդ Հայք աշխարհի պատմական Լուսաքառիճ քաղաքին համապատասխանող Կապան (Կապան-մաղեն) գյուղաքաղաքի անունը Քեբանի փոխելը:

Կիլիկիայում, Հալեպի նահանգի Մարաշի գավառում, Չեյթունի գավառակում, Չեյթուն բերդաքաղաքից 8 կմ հարավ-արևմուտք, Կանչիբերդից արևմուտք, Լեռնային Կիլիկիայի սահմանագլխին, Կապան կոչվող ընդարձակ հարթավայրի մերձակայքում, Ֆռնուս գյուղաքաղաքի և Աստվածաշեն լեռան միջև մի սեպածև ժայռի վրա գտնվող, հզոր պարիսպներով ամրացված վաղեմի Կապանու բերդը նրանք արտասանական այլափոխմամբ դարձրել են Քաբնիսբերդ: Այս բերդում էր 1375 թ. ամրացել Կիլիկիայի վերջին թագավոր Լևոն Լուսինյանը, որն ի վերջո ստիպված էր հանձնվել: Կապանի բերդապաշտպան պարիսպների ավերակներն ու նրա այլ շինությունների մնացորդները պահպանվել են մինչև մեր օրերը:

Արևմտյան Հայաստանում, Բիթլիսի նահանգի Մուշի գավառում, Մուշ քաղաքից 14 կմ հեռավորությամբ դեպի արևմուտք գտնվող Աղան Տարոնեցու⁶⁷ և Ս. Ծոցիկյանի⁶⁸ մոտ Տատրագոմ անվամբ հիշատակված գյուղանունը իրենց արտասանությանն են հարմարեցրել Դազլկոմ ձևով, ինչպես որ նշանակված է Ռուսական 1:200000 մասշտաբի քարտեզում:

Կարսի մարզի Կաղզվանի օկրուգի Նախիջևանի տեղամասում, Կաղզ-

66 Հ. Յ. Գասպարյան, Չմշկածագ և իր գյուղերը, «Պայքար», 1969, էջ 245-249:

67 Աղան Տարոնեցի, Հարազատ Պատմություն Տարոնոյ, Կահիրե, 1968, էջ 85:

68 Ս. Ծոցիկյան, Արևմտահայ աշխարհ, Նիւ Յորք, 1947, էջ 448:

վան գյուղաքաղաքից 33 կմ հյուսիս-արևելյան ուղղության վրա, Տեկոր բերդի մոտ գտնվող Տեկոր գյուղի անունը թուրքերն այլափոխել են Դիգոր: Նրանք Դիգոր են անվանել նաև Տեկոր գյուղում 5-րդ դարում իշխան Սահակ Կամսարականի նախածնունդամբ կառուցված Տեկորի տաճարը, որը կոչվում էր նաև Տեկորի վանք, Սբ. Երրորդություն, Վկայարան սրբոյն Սարգսի ու այլ անվանումներով: Այն պատմական Հայաստանի բազիլիկատիպ ու կենտրոնագմբեթ շինությունների հնագույն մնուշ է: Տեկորի տաճարի վրա պահպանված վիմագիր արձանագրությունը եղածների մեջ հնագույնն է:

Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի Ռշտունիք գավառում, նոր ժամանակների Վանի նահանգի Վանի գավառի Գավաշի գավառակում, Նաբեկավանքի մոտակայքում, նրա դիմաց գտնվում էր Ա-Դոյի կողմից Տշող գետակի հովտում հիշատակված Տշող գյուղը⁶⁹: Ղ. Ալիշանը հիշատակում է Տշող անվամբ և գրում գյուղի անվան մասին պահպանված տեղական ավանդությունը⁷⁰: Ըստ Լ. Խաչիկյանի՝ գյուղը հիշատակված է Տայշող և Տշող անուններով⁷¹: Ղ. Փիրղալենյանը գյուղը վկայում է Տշող անվամբ⁷²: Դեռևս հնուց նշանավոր ու գրչության հայտնի կենտրոն Տշող կամ Տայշող գյուղանունը դարձրել են Դըշախ: Պահպանված ավանդությունը այս գյուղի անվան ծագման մասին ասում է, որ երբ Հայկի կողմից սպանված Բելին բերում են այստեղ թաղելու, նետը հանում են նրա կրծքից, արյունը շողալով դուրս է ժայթքում: Այդ տեսնելով մարդիկ բացականչել են «Տես շող», որը և աղավաղվելով դարձել է Տշող:

Կիլիկիայում, Հալեպի նահանգի Մարաշի գավառում, Մարաշ քաղաքից հյուսիս-արևելյան ուղղությամբ, Չինար լճից ոչ շատ հեռու գտնվում էր հայկական Կամուրջ կոչվող գյուղը, որն իր անունն ստացել է գետի վրա հռոմեական շրջանից պահպանված կամրջի առկայությունից: Գյուղի Կամուրջ անունը նրանք, հարմարեցնելով իրենց արտասանությանը, դարձրել են Քերմուշ:

Կարսի մարզում, Կարս քաղաքից 35 կմ արևելք, պատմական Հայաստանի Անի մայրաքաղաքից հյուսիս, նրա մերձակայքում, Ախուրյան գետի աջակողմյան վտակներից մեկի ափին գտնվող հայաբնակ Գետիկ Ներքին,

69 Ա-Դո, նշվ. աշխ., էջ 52-53:

70 Ղ. Ալիշան, Հայաստան, յառաջ քան գլինելն Հայաստան, Վենետիկ, 1904, էջ 145:

71 Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Խ. Ա, Եր., 1955, էջ 42, 525:

72 Ղ. Փիրղալենյան, Նոտարք հայոց, Պոլիս, 1888, էջ 31:

Գետիկ Միջին և Գետիկ Վերին գյուղերի անունները, որոնք կոչվել են պարզապես Գետիկներ, նրանք հարմարեցնելով իրենց արտասանությանն այլափոխել են Գեղիքլեր: Այստեղ՝ Անի մայրաքաղաքի մերձակայքում էին գտնվում Գետիկներ կոչվող աղբյուրները, որտեղից անց էր կացվել Անի մայրաքաղաքի ջրմուղը:

Արևմտյան Հայաստանում, Էրզրումի նահանգում Էրզրումի գավառի Բասենի գավառակում, Օկոմի գյուղից փոքր հեռավորությամբ գտնվող և հնում Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Բասեն գավառի մեջ մտած Պատիճվան գյուղանունը թուրքերն իրենց արտասանությանն են հարմարեցրել Բաղիջվան ձևով:

Արևմտյան Հայաստանում, Էրզրումի նահանգի Երզնկայի գավառում գտնվում է նրա կենտրոն Երզնկա քաղաքը, որը հիշատակված է դեռևս մ.թ.ա. 8-րդ դարի սեպագիր արձանագրություններում, իսկ պատմագիրների մոտ մ.թ.ա. 1-ին դարում վկայված է Երեզ կամ Երիզա անուններով: Քաղաքը հեթանոսական շրջանում Հայաստանի կրոնական կենտրոններից էր, որը մինչ թուրքական տիրապետության հաստատվելն Արևմտյան Հայաստանում (16-րդ դարի սկզբներ) ուներ 5 եկեղեցի և Երեզ կոչվող վանք, 12 դպրոց ու վարժարան: Երզնկա անունը թուրքերը հարմարեցնելով իրենց արտասանությանն այլափոխել են Էրզինջան: Երզնկան հայ մշակույթի նշանավոր կենտրոններից էր, որտեղ գրվել են բազմաթիվ ձեռագրեր, լույս տեսել ամսագիր և շաբաթաթերթ:

Արևմտյան Հայաստանում, Էրզրումի նահանգի Երզնկայի գավառում, Երզնկա քաղաքից 9 կմ հարավ, Հայկական լեռնաշխարհի Մեծուրի լեռնաշղթայի հյուսիսային ստորոտում, Եփրատ գետի ձախակողմյան վտակներից մեկի հովտում, Գառնիկ ճգնավորի և Տիրաշեն վանքերի մոտակայքում գտնվող Տաճրակ գյուղի անունը, որն առաջացել է Տիրաշենի վանքի ավանդատան Տաճարիկի անունից, թուրքերն իրենց արտասանությանը հարմարեցնելով դարձրել են Դաջրեք: Տաճրակ գյուղը հնում մտնում էր Մեծ Հայքի Բարձր Հայք աշխարհի Եկեղյաց գավառի մեջ:

Արևմտյան Հայաստանում, Էրզրումի նահանգում, Կարին քաղաքից 30 կմ հեռավորությամբ դեպի հյուսիս, Թորթումի գավառակի հարավային սահմանի մոտ, Ծաղկավետ լեռնագագաթի հարավ-արևելյան ստորոտում, Եփրատ գետի ակունքներից մեկի աջ ափին գտնվող Ծաղկի գյուղանունը հարմարեցնելով իրենց արտասանությանը այլափոխել են Զաղզի:

Հայկական լեռնաշխարհում, Հայկական Տավրոս լեռնահամակարգում, Վանա լճի արևմտյան ափից մոտավորապես 20 կմ արևմտյան ուղղությամբ, Նեմրոք լեռից ոչ մեծ հեռավորության վրա գտնվող Գրգուռ լեռան

անումը դարձրել են Քերքյուր: Ռուսական 5-վերստանոց տեղագրական քարտեզում՝ Կերկյուր:

Արևմտյան Հայաստանում, Էրզրումի նահանգի Էրզրումի գավառում, Կարին քաղաքից 12 կմ հեռավորությամբ դեպի հյուսիս-արևմուտք, Եփրատ գետի ափունքի շրջանում, Կարնո Շամբ լճակի հյուսիսային կողմում գտնվող Գրիչք գյուղանունը, դարձրել են Բիրինչ:

Հնում Մեծ Հայքի Տուրուբերան աշխարհի Աղիովիտ գավառում, Վանա լճի հյուսիսային ափին էր գտնվում դեռևս ուրարտական ժամանակաշրջանից գոյություն ունեցող Արճեշ քաղաքը, որի մոտ գտնվել են ուրարտական քաղափոր Արգիշտի 2-րդի (7-րդ դար, մ.թ.ա.) թողած արձանագրություններից երկուսը, որոնցում հիշատակվում է քաղաքի արհեստական լճակի ու ջրանցքի կառուցման մասին: Արճեշ անունը կապվում է Արգիշտի 2-րդի հետ: Հայկական աղբյուրներում 7-րդ դարից հիշատակվող Արճեշը, թուրքերը հարմարեցնելով իրենց արտասանությանը, այլափոխել են Էրջիշ:

Մեծ Հայքի Տայք աշխարհում, Արսյաց փոքր գավառի կենտրոն ու գլխավոր բերդ հանդիսացած, հետագայում Արևմտյան Հայաստանի Էրզրումի նահանգ, Էրզրումի գավառի Կիսկիմ գյուղաքաղաքից հյուսիս-արևելք, Ճորոխ գետի աջակողմյան շրջանում, լեռնային անտառապատ վայրում գտնվող Արսիս գյուղի անունը արտասանական այլափոխման են ենթարկել Էրսիս ձևով:

Պատմական Փոքր Հայքի Կեսարիայի նահանգում, Կեսարիա քաղաքից 2 կմ արևելք գտնվող Կարմրակ գյուղաքաղաքի անունը նրանք ենթարկելով արտասանական այլափոխության դարձրել են Գերմիր: 19-րդ դարի 2-րդ կեսում Կարմրակը բարեկարգ գյուղաքաղաք էր և ուներ ավելի քան 1000 տուն բնակիչ: Գյուղաքաղաքը հնում տեղադրված էր հետագայի Կարմրակի տեղադրավայրից 3 կմ հյուսիս, Կարմիր հող կոչված վայրում, որից էլ առաջացել է գյուղաքաղաքի Կարմրակ անունը: Կարմրակը Գերմիր անվամբ նշանակված է Ռուսական 1:200000 և 1:500000 մասշտաբների տեղագրական քարտեզներում:

Արևմտյան Հայաստանում, Էրզրումի նահանգի Ներքին Բասեն (Խորասանի) գավառակի Չագ գյուղը, որը վարչատարածքային այլ բաժանմամբ հիշատակվում է մաս Կարսի մարզի Կաղզվանի օկրուգում, նրանք դարձրել են Ջաք:

Արևմտյան Հայաստանում, Խարբերդի նահանգի Ակն քաղաքից փոքր հեռավորությամբ դեպի արևելք, Սարին Սուրբ Սարգիս բարձր լեռան մոտակայքում, գեղատեսիլ վայրում գտնվող Չորակ գյուղանունը արտասանական այլափոխմամբ դարձրել են Սորաղ:

Կարսի մարզի Կաղզվանի օկրուգում, Սարիղամիշ գյուղաքաղաքից 30 կմ հարավ-արևմուտք, նույնքան հեռավորությամբ Խորասանից արևելք, Խորասանի գավառակի սահմանի վրա եղած Չիքահանք գյուղը, որը մինչև 1878 թ. Բեռլինի պայմանագրի կնքումը մտնում էր Արևմտյան Հայաստանի Էրզրումի նահանգի Էրզրումի գավառի Խորասանի գավառակի մեջ, նրանք հարմարեցրել են իրենց արտասանությանը և աղավաղել Սըքահան ձևով: Ռուսական 1:200000 մասշտաբի տեղագրական քարտեզում՝ Սատագան:

Արևմտյան Հայաստանում, Էրզրումի նահանգի Կարին քաղաքից 12 կմ հեռավորությամբ դեպի հյուսիս, Կարնո Շամբ լճակ-շամբուտի հյուսիս-արևելյան կողմում, հարթավայրում գտնվող Չիքահող գյուղի անունը, որը նախկինում եղել է արքեպիսկոպոսանիստ, նրանք դարձրել են Սըտավուկ, Չիքավուգ: 1895 թ. թուրքերի կազմակերպած հայկական կոտորածների ժամանակ ամբողջ Էրզրումի գավառակում միայն Չիքահող գյուղն էր, որը կարողացավ ինքնապաշտպանական հերոսական դիմադրություն ցույց տալ և առժամանակ փրկվել կոտորածից: Գյուղն ավերվեց 1915 թ. Հայոց ցեղասպանության ժամանակ: Համաձայն պահպանված ավանդության Չիքահող գյուղից փոքր-ինչ հեռու գտնվող Սբ. Լուսավորիչ վանքի մոտ եղած փոսում պահվել է Գրիգոր Լուսավորիչը: Գյուղը Ռուսական 10-վերստանոց և 1:200000 մասշտաբների քարտեզներում նշանակված է Սըտավուկ անվամբ:

Արևմտյան Հայաստանում, Էրզրումի նահանգի Էրզրումի գավառի Սպերի գավառակում գտնվող Ճիպոտ գյուղանունը նրանք հարմարեցրել են իրենց արտասանությանը և հայկական տեղանունն այլափոխել Չիփոթ: Ճիպոտ գյուղում 1915 թ. Հայոց ցեղասպանությունից շատ տարիներ առաջ՝ 1897 թ. թուրքերը սպանել են մի քանի տասնյակ հայերի:

Արևմտյան Հայաստանում, Էրզրումի նահանգի Էրզրումի գավառում, Քղիի գավառակում, Քղի գյուղաքաղաքից հյուսիս-արևելք, Արածանի գետի աջակողմյան Քղի վտակի միջին հոսանքի ձախ կողմում գտնվող Ճպլոզեղ գյուղի անունն աղավաղել են Ջըբըր ձևով:

Արևմտյան Հայաստանում, Խարբերդի նահանգի Ակնի գավառակում, Ակն քաղաքից հարավ-արևելք, նրանից ոչ շատ հեռու, Մփրատ գետի աջակողմյան շրջանում գտնվող Շապլվար գյուղանունը հարմարեցրել են իրենց արտասանությանը Ջաբլվար ձևով: Ա. Փոլատյանի «Պատմություն Հայոց Արարկիլիի» գրքում գետեղված քարտեզում գյուղը նշանակված է Ջաբլվար ձևով⁷³: Սա այն գյուղն է, որն անմահացել է Երվանդ Օտյանի «Առաքելու-

73 Ա. Փոլատյանի գրքում գետեղված քարտեզը, որը կոչվում է «Արարկիլի եւ իր շրջակայքի գիւղերը» գծագրել է Մ. Պալեյանը 1947 թ. Կահիրեում:

քյուն մի ի ծապլվար» երգիծական ստեղծագործության մեջ:

Հայկական լեռնաշխարհում, Արևմտյան Հայաստանում, Էրզրումի նահանգի Բաբերդի գավառակում, Բաբերդ քաղաքից 20 կմ հյուսիս-արևելյան ուղղությամբ հոսող և Սև ծովը թափվող Ճորոխ գետի ձախակողմյան Զինջջուր կամ Ճենջուր վտակի անունը հարմարեցրել են իրենց արտասանությանը՝ այլափոխել Չենջուր:

Կարսի մարզի Կաղզվանի օկրուգում, Երասխ (Արաքս) գետի ձախակողմյան Ախուրյան վտակի աջ ենթավտակ Տեկոր գետի ստորին հոսանքի երկու ափերին էր գտնվում Ծպնի գյուղը, որի համար էլ այն կոչվում էր Ծըպնի: Ծպնի գյուղանունը, թուրքերը դարձրել են Զըբնի: Գյուղի մոտակայքում գտնվող Ծպնի բերդը կարևոր դեր է խաղացել 19-րդ դարի ռուս-թուրքական պատերազմների ժամանակ: Ռուսական զորքերն այստեղ պարտության են մատնել թուրքերին: Գյուղում կար 7-րդ դարի մի եկեղեցի, որին կից վարժարանը գործում էր մինչև 1915 թվականի ցեղասպանությունը:

Պատմական Փոքր Հայքի Սեբաստիայի նահանգի Շապին Գարահիսարի գավառում, Շապին Գարահիսար քաղաքից 2 կմ հեռավորությամբ հարավ-արևելյան ուղղության վրա գտնվող Ծիպեռի գյուղի անունը դարձրել են Զիբերի: Ծիպեռի գյուղն ուներ Սբ. Հակոբ անվամբ եկեղեցի, որն ուխտատեղի էր:

Հայկական լեռնաշխարհում, Բյուրակն-Մեծուրյան լեռնաշղթայում գտնվող Սուրբ Լույս լեռան անունը, հայկական մի ավանդության համաձայն, Սուրբ Լույս է անվանել Նոյ նահապետը, երբ ջրի վրա լողալիս վաղ առավոտյան նրա տապանը դիպել է այս լեռան գագաթին: Սուրբ Լույս լեռան անվամբ հայերից բացի երոզվում էին նաև քրդերը, որոնք ամեն տարի այստեղ էին գալիս Վարդավառի տոնախմբությունների արարողությունների օրերին: Սուրբ Լույս լեռան անունը թուրքերն աղավաղել են Սիպլիս անվամբ:

Արևմտյան Հայաստանում, Բիթլիսի նահանգում, Սասունի Խուլվի գավառակում, Խուլվի գյուղից 10 կմ հարավ գտնվող Բնկուգեք գյուղի անունը նրանք դարձրել են Ինգուգակ: Երեք եկեղեցի ունեցած գյուղը գրչության կենտրոն էր, որը 1915 թ. նույնպես ենթարկվել է Հայոց ցեղասպանության արհավիրքներին: Գյուղի շրջակայքում պահպանվել էին հին տների ավերակներ և այլ հնություններ:

Պատմական Փոքր Հայքի Սեբաստիայի նահանգի արևելյան հատվածում, Տերիկի գավառակում, Մեծ Հայքի արևմտյան սահմանի մոտ, Եփրատ գետի աջակողմյան Տերիկի գետ վտակի ստորին հոսանքի ափին, Տերիկ գավառակի և Պավլիկյանների ռազմաքաղաքական հզոր կենտրոն հանդի-

սացած Տերիկ քաղաքը (բերդաքաղաքը), որը մեծ դիմադրություն էր ցույց տվել բյուզանդական զորքերին, արտասանական այլափոխմամբ դարձրել են Դիվրիգի: Ն. Արոնցը ենթադրում է, որ Տերիկ անունը կարող է առաջացած լինել հայերեն տափարակ և կամ էլ տավրիկ, այսինքն փոքր Տավրոս բառերից⁷⁴: Տերիկի գավառակը ինչպես նաև Տերիկ քաղաքում գտնվող Տերիկի վանքի անունը ևս կրել է արտասանական մույն փոփոխությունը և անվանվել Դիվրիգի:

Արևմտյան Հայաստանի Վանի նահանգում, Վան քաղաքից հյուսիս-արևելք, Արճակ լճի հարավ-արևելյան ափից ոչ մեծ հեռավորությամբ գտնվող և Վան քաղաքի հերոսական պաշտպանությանը գործում մասնակցություն ունեցած Արճակ գյուղանունը, հարմարեցնելով իրենց արտասանությանը, այլափոխել են Էրչեք: Երբեմն վերջինիս նրանք նաև ավելացրել են թուրքական բյոյ՝ գյուղ նշանակող բառը և տեղանունը դարձրել Էրչեքբյոյ:

Հայկական լեռնաշխարհում, Վանա լճից ոչ մեծ հեռավորությամբ դեպի արևելք գտնվող Արճակ լճի անունը հարմարեցնելով իրենց արտասանությանն այլափոխել են Էրչեք: Լիճն Արչակ-գյոլ և Էրջեկ-գյոլ անվանաձևերով նշանակված է Ռուսական 5-վերստանոց քարտեզում: Ռուսական 1:200000 և 1:500000 մասշտաբների տեղագրական քարտեզներում նշանակված է Էրչեկ-գյոլ անվամբ:

5) Անվանափոխված տեղանուններում հանդիպում են նաև այնպիսիները, որոնց հայկական բառարմարին ավելացրել են թուրքական հոգնակիակերպ «լար», փոքրացուցիչ «ջիկ», «ջուկ» կամ տեղ նշանակող «լի», «լու» վերջածանցներ և հայկական տեղանունը դարձրել խառը կազմությանը անուն:

Այսպես՝ Հայկական լեռնաշխարհում, Արևմտյան Հայաստանի Էրզրումի նահանգի Էրզրումի գավառում, Դերջան կամ Մամախաթունի գավառակում, Կարին (Էրզրում) քաղաքից արևմուտք գտնվող Շողանի կիրճը կամ Շողանի լեռնանցքը դարձրել են Շողանլու: Այստեղով էր հոսում Արևմտյան Եփրատ գետի Անտիպոնտական լեռնաշղթայից սկիզբ առնող Շողանի գետ կոչվող վտակը:

Արևմտյան Հայաստանում, Էրզրումի նահանգի Խնուսի գավառակում Գասպար անվամբ մի հայի կողմից հիմնադրվել է գյուղակ, որը նրա անվամբ էլ կոչվել է Գասպարի գեղ: Հետագայում գյուղակին տվել են նաև հայկական Եղրդ կամ Եղվրդի անունները: Եղրդը կամ եղվրդին ուռենու մման ծառ է, որի ոստերից կողովներ են պատրաստում: Այդ անուններին նրանք

74 Н. Адонц, *նշվ. աշխ.*, էջ 80-81:

ավելացրել են «լի» և «լու» վերջածանցներ ու տեղանունները դարձրել Եղորդի և Եղորդու:

Աղավաղել են անգամ հայկական Վարդան անձնանվամբ տեղանունները՝ նրանց հավելելով թուրքական տեղ ցույց տվող «լի» կամ «լու» վերջածանցներն ու դրանք դարձրել Վարդանլի կամ Վարդանլու:

Արևմտյան Հայաստանում, Էրզրումի նահանգի Էրզրումի գավառում, Դերջան կամ Մամախաթուն գավառակում, Մամախաթուն քաղաքից 20 կմ հեռավորությամբ դեպի հարավ-արևմուտք, Եփրատ գետի ձախափնյա շրջանում գտնվող Վանքիկ գյուղանվանն ավելացնելով թուրքական «լար» վերջածանցը՝ նրանք տեղանունը դարձրել են Վանքիկլար:

6) Երբեմն անվանափոխել են տեղանվան փոքրերակը թարգմանելով:

Հայկական լեռնաշխարհում, Հայկական պար լեռնահամակարգի արևելյան հատվածում, Արածանի գետի վերին հոսանքի շրջանում, Մեծ Մասիս լեռնագագաթից արևմուտք, Սինակ լեռան մոտ էր գտնվում Գայլատու լիճը կամ նաև Չկնաբեր կոչվող ծովակը, որն իսկապես հարուստ է եղել ձկներով, հատկապես՝ կարմրախայտով: Լճի անունն անվանափոխելիս նրանք թարգմանել են տեղանվան Չկնաբեր տալբերակը և լիճը կոչել Բալըբգյոլ (բալըք նշանակում է ձուկ, գյոլը՝ լիճ): Լճից սկիզբ առնող Չկնագետ (հնում՝ Առուն) կոչվող գետը, նույնպես վերանվանել են Բալըբչայ անվամբ որի չայ բաղադրիչը նշանակում է գետ: «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»-ը Գայլատու անվան մասին գրում է. «Լճի հյուսիս-արևելյան մասում կա մի փոքրիկ կղզյակ, որի վրա նշմարվում են հին մենաստանի մնացորդներ և խաչարձաններ: Անունը հավանաբար կապված է մոտակայքում եղած դաստակերտի (քաղաք) անվան հետ»⁷⁵: Իրականում, Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Բասեն կամ Ծաղկոտն գավառում հիշատակվում է Գայլատու անվամբ քաղաք, որը տեղադրում են Գայլատու լճի մոտակայքում: Այդ մասին 7-րդ դարի պատմիչ Մեթոսը հիշատակում է. «Եւ ... եհարգ Յոնն ... Եւ կալավ ... քաղաքս՝ զԱնգղ և զԳայլատուս, զԵրզնայ ...»⁷⁶:

Հայկական լեռնաշխարհում, Արածանի (Արևելյան Եփրատ) գետի ձախակողմյան, Վանա լճից արևմուտք ընկած տարածքից սկիզբ առնող Մեղրագետ վտակը, որ կոչվել է նաև Սև ջուր՝ վերջինս տրվել է գետին նրա ջրի մուգ գույնի պատճառով, նրանք անվանափոխել են Կարատու (կարա=սև + տու=ջուր):

75 Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան, նշվ.աշխ., հ.1, Եր., 1986, էջ 720:

76 Մեթոս, Պատմություն, Եր., 1979, էջ 76:

Արևմտյան Հայաստանի Էրզրումի նահանգում, Կարին քաղաքից հյուսիս, Արևմտյան Եփրատ գետի վերին հոսանքի շրջանում ջրի դանդաղ ընթացքի հետևանքով առաջացած ծանծաղ հատվածը գոյացրել է ծանծաղ լճակ կամ շամբուտ, որը կոչվում է Կարնո շամբ և ունի անվան Շամբ տարբերակը: Այս հատուկ անվան մեջ թուրքերը նախընտրել են թարգմանել տեղանվան Շամբ տարբերակը Սազլըք ձևով, այդ անվամբ էլ անվանափոխել են Կարնո շամբ տեղանունը: Ըստ Հր. Աճառյանի՝ սազ բառը նշանակում է «կնյուն», «ճիլ», մասն` «տիղմ (պղտոր ջրի տակ)», իսկ սազլըք-ը՝ «կնիւններ բուսած տեղ»⁷⁷: Էդ. Աղայանը կնյունը բացատրում է կնյունագգիների ընտանիքին պատկանող ճահճային բույս, ճիլ կամ բոշխ⁷⁸:

Արևմտյան Հայաստանի, Էրզրումի նահանգի, Կարին քաղաքից 6 կմ հյուսիս-արևմուտք, Արևմտյան Եփրատ գետի մերձափնյա շրջանում, հնում՝ Մեծ Հայքի Բարձր Հայք աշխարհի Կարին գավառում գտնվող պատմական Կակառիճ գյուղաքաղաքի անվան թարգմանության անհնարինության պատճառով նրանք այն անվանափոխել են Զիֆրիլք՝ թարգմանելով Կակառիճ գյուղանվան Ագարակ տարբերակը: Կակառիճ գյուղաքաղաքը Ռուսական 1:200000 քարտեզում նշանակված է Զիֆուլիկեյու ձևով:

7) Բոլոր այն դեպքերում, երբ աշխարհագրական օբյեկտների անունները թարգմանելու կամ աղավաղմամբ այլափոխելու և իրենց արտասանությանը հարմարեցնելու որևէ տարբերակ չեն ունեցել, նրանց պարզապես տրվել են տեղանվան հեղ որևէ կապ չունեցող նոր, կամայական անուններ:

Այսպես՝ Կիլիկիայում, Հալեպի նահանգի Մարաշի գավառում, Ջեյթուն գյուղաքաղաքից հարավ-արևելյան ուղղության վրա էր գտնվում արքեպիսկոպոսանիստ հանդիսացած ու մեծ հայրենասիրությամբ հայտնի, քաջ կռիվողներ ունեցող Արեգին բնակավայրը նրանք անվանափոխել են Ալաբաշը, որն ըստ թուրքական բառարանի՝ շաղգամի նման բանջարաբույս է⁷⁹:

Հայկական լեռնաշխարհի Բյուրակն-Մնձուրյան լեռնաշղթայում, Էրզրումի նահանգի Խնուսի գավառակի հարավային սահմանում գտնվող Դեղթափ լեռան անվան թարգմանության դարձյալ անհնարինության պատճառով թուրքերը լեռը կրաքարային կառուցվածքի սպիտակ գույնի համար անվանել են Աքդաղ (աք նշանակում է սպիտակ + դաղ՝ լեռ): Եվ բացի դրանից նրանք լեռանը տվել են մաս Գյուզեղաղ անվանումը, որ նշանակում է գեղեցիկ լեռ:

77 Հր. Աճառեան, նշվ. աշխ., էջ 302:

78 Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, Եր., 1976, էջ 742:

79 Türkç sözlük, Անկարա, 2005, 10-րդ հրատարակություն:

Մեծ և Փոքր Հայքերի սահմանում, հնում Փոքր Հայքի մեջ մտնող և Արևմտյան Եփրատ գետի ավին գտնվող հետագայում՝ Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգի Խարբերդի գավառի Ալն գավառակի կենտրոն հանդիսացած ու հայկական Մարընտունիկ («Մայր ընտանիք») ուխտատեղից ոչ մեծ հեռավորության վրա գտնվող Ալն գյուղաքաղաքը վերանվանել են Քեմալիեի՝ այն անվանափոխելով թուրքական անձնանվամբ տեղանվան:

Հայկական լեռնաշխարհի Հայկական պար լեռնահամակարգի արևելյան ծայրակետում, Արարատյան դաշտի հարավային եզրին, Արաքս գետի աջ կողմում գտնվող և հայոց ինքնության խորհրդանիշ հանդիսացող Մասիս Մեծ (Արարատ Մեծ) լեռանը նրանք տվել են Աղրը դաղ, որի Աղրը-ն, ըստ Հ. Ա. Պօհնալյանի բառարանի, նշանակում է «1. ցավ, 2. կսկիծ, խիթ, 3. Արարատ լեռ»⁸⁰, ինչպես նաև Բյույուք դաղ=Մեծ լեռ անվանումները⁸¹: Լեռան վրա է գտնվում Սուրբ Հակոբի աղբյուրը և նրա մերձակա շրջանից սկիզբ առնող Գիմո գետը: Լեռը եղել է հայոց արքունի որսատեղի: Հայերի պաշտամունք հանդիսացող Մասիս լեռն այժմ կոչվում է թուրքական Աղրը դաղը անվամբ:

Երևանի նահանգի Սուրմալուի գավառում, Արաքս գետի աջակողմյան հետագայում՝ Կողբ, հնում՝ Վարդամարգ վտակի ավին գտնվող և հնուց աղահանքի հարուստ պաշարներով հայտնի Մեծ Հայքի Այրարատ աշխարհի ճակատք գավառի կենտրոն հանդիսացած Կողբ գյուղաքաղաքի անունը նրանք վերափոխել են Թուրուջա, որ նշանակում է աղուտ՝ ամենայն հավանակայնությամբ նկատի են ունեցել գյուղաքաղաքի մեծ պաշարներով հարուստ աղահանքեր ունենալու հանգամանքը:

Հայկական լեռնաշխարհի Հայկական պար լեռնահամակարգի արևմտյան հատվածում գտնվող Այծպտկունք լեռների՝ Կարին քաղաքից 10 կմ հարավ-արևելք ընկած Այծպտկունք լեռնագագաթը թուրքերն անվանափոխել են Էյերլի, որ նշանակում է թամբած:

Արևմտյան Հայաստանում, Էրզրումի նահանգի Էրզրումի գավառում, Դերջան կամ Մամախաթունի գավառակում, Դվնիկ գյուղի մոտ, Արևմտյան Եփրատ, հետագայում Կարասու վերանվանված գետի վրա հավանաբար 4-րդ դարում կառուցված Դվնիկի կամուրջը նրանք անվանափոխել են Կա-րաքյոփրի, որում առաջին կարա բաղադրիչը նշանակում է սև, իսկ երկրորդ բաղադրիչը՝ բյոփրի-ն՝ կամուրջ:

80 Հ. Ա. Պօհնալյանի, նշվ. աշխ.:

81 Մեծ Մասիս լեռանը տված այլ թուրքական անունների մասին տես «Երևանի համալսարան» հանդեսի 1991, №3, էջ 27-36, Զ. Եսայանի հոդվածում:

Արևմտյան Հայաստանում, Բիթլիսի նահանգի Մուշի գավառում, Վահագն լճից հյուսիս, Կոփ գետի ափին, Սբ. Դանիել վանքից հյուսիս-արևմուտք էր գտնվում Կոփ գյուղաքաղաքը։ Ըստ պահպանված ավանդության՝ Տիրան թագավորի հրամանով Դանիել ասորու դիակը սայլով տեղափոխելու ժամանակ այս գյուղի մոտ սայլի կոփը (սայլի առջևի և հետևի հաստ փայտերից մեկը) ընկնում է, դրա համար էլ գյուղաքաղաքը կոչվել է Կոփ։ Գյուղաքաղաքի անունը նրանք անվանափոխել են Բուվանդը, որ նշանակում է պղտոր ջուր, ինչպես նաև գինի⁸²։ Դեռևս հնագույն ժամանակներում Կոփի մոտ Ուրարտական Մենուա թագավորը կառուցել է տվել ոռոգիչ ջրանցք։

Կիլիկիայում, Հալեպի նահանգի Մարաշի գավառում, Մարաշ և Միսքաղաքների միջև Շուղրի կիրճի մոտ, որտեղով հոսում է Ջեյհան գետը, բլրի վրա գտնվող Հայոց կաթողիկոսի նստավայր հանդիսացած Շուղրի վանքը նրանք անվանափոխել են Իչ նահիե վանք, որ նշանակում է ներքին գավառակի վանք։ Շուղրի վանքը հայտնի մշակութային և գրչության կենտրոն էր։

Հայկական լեռնաշխարհի կենտրոնական հատվածում, Մեծ ու Փոքր Մասիս լեռնագագաթներից մինչև Արևմտյան Եփրատ գետի ձախ ափը, Մարիամ լեռնագագաթը, զուգահեռականի ուղղությամբ ձգվող և Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր լեռնահամակարգը հանդիսացող Հայկական պարը հնում տարբեր մասերում ունեցել է տարբեր անուններ։ Լեռնահամակարգի արևելյան հատվածն անվանվում էր «Այրարատյան լեռինք», որից դեպի արևմուտք ընկած հատվածը կոչվում էր Բարդուղի կամ Բարթուղյան լեռներ, դրանից արևմուտք ընկածը Սուկավետի լեռներ, իսկ արևմտյան հատվածի մեծ մասը հանդիսանում էր Այծպտկունք լեռնաշղթան։ Հայկական պար լեռնահամակարգը նրանք անվանափոխել են Աղըր դաղը, որի Աղըր-ն նշանակում է ցավ։

Կիլիկիայի հայկական պետության տարածքով հոսող և Միջերկրական ծովը թափվող, Ջեյհան կամ Պյուռանոս գետի վրա, Հալեպի նահանգի Մարաշի գավառի Ջեթրուն գյուղաքաղաքից 13 կմ հարավ-արևելյան ուղղությամբ, Բնկուգեկ լեռան մոտ գտնվող, հայոց եպիսկոպոսներից Հովհաննեսի կառուցած կամուրջը, որն այդ պատճառով էլ կոչվել է Վարդապետի կամուրջ, թուրքերն անվանափոխել են Համիդիե թուրքական անձնանվամբ տեղանվան։

Հայկական լեռնաշխարհում, պատմական Հայաստանի Անի մայրաքաղաքից արևմուտք, Շիրակի սարահարթում, Արաքս գետի ձախակողմյան Ախուրյան վտակի ստորին հոսանքի աջ կողմում, վերջինիս աջա-

82 Հր. Աճառեան, նշվ.աշխ., էջ 297։

կողմյան Կարս վտակից հարավ տարածվող հնուց՝ Արջոռառի՝ կամ Առճոռառի՝ կողմի վեռնաշրջան թուրքերն անվանափոխել են Ալաջա (գոյնգգուն, խայտաբղետ)⁸³։ Նրանք Ալաջա են անվանափոխել նաև Արաքս գետի ձախակողմյան Ախուրյան վտակի աջ օժանդակ Ծաղկոցաձոր գետակը, որն սկիզբ է առնում հնում՝ Արջոռառի՝ կամ Առճոռառի՝ հետագայում, թուրքերի կողմից Ալաջա անվանափոխված վեռնաշրջանից ու հոսելով դեպի պատմական Հայաստանի Անի մայրաքաղաք, արևմտյան և հյուսիս-արևմտյան կողմերից շրջափակում է մայրաքաղաքը ու նրանից ոչ հեռու միանում մայր գետին։

Հայկական վեռնաշխարհում, Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Ծաղկոտն գավառում, Վանա լճից հյուսիս ընկած Ծաղկանց լեռների հյուսիսային հատվածում, Արածանի գետի ակունքի շրջանում, նրա ձախ ափին, պատմական Ջիրավի դաշտի հարավային եզրին գտնվում է Նպատ լեռը, որի ստորոտում պահպանվում են Սբ. Լուսավորչի վանքի ավերակները։ Լեռանը նրանք տվել են Թափաշէյդ կամ Թափաշէիտ անունները, որոնցում քափա նշանակում է լեռ, սար, իսկ շէիտ, շէյդ-ը՝ մահատակ։ Սա այն հանրահայտ լեռն է, որտեղից հայոց Պապ թագավորը և Ներսես Մեծ կաթողիկոսը 371 թ. հետևում էին փոքրաքանակ հայկական զորքի և պարսկական մեծաթիվ բանակի միջև Ջիրավի դաշտում տեղի ունեցող ճակատամարտի ընթացքին, որում հայերը տարել են փայլուն հաղթանակ։ Այս մասին պատմահայր Մ. Խորենացին գրում է. «... Երբ Մեծ Ներսեսը այս բոլորը տեսավ, բարձրացավ Նպատ լեռան գլուխը և ձեռքերը դեպի երկինք բարձրացրեց և առանց իջեցնելու աղոթք էր անում, մախամարգարե Մովսեսի նման, իսկ երկրորդ Ամադեկը պարտություն կրեց»⁸⁴։

Պատմական Փոքր Հայքի Կեսարիայի մահանգում, Անտիտավրոս վեռնաշրջանում, Կեսարիա քաղաքից 8-9 կմ հեռավորությամբ դեպի հարավ-արևելք, Արգեոս լեռան հյուսիս-արևելյան կողմում է գտնվում երկգագաթ Սուրբ Բարսեղի լեռը, որը թուրքերն անվանափոխել են Ալիդաղ, որի Ալի-ն թուրքական անձնանուն է + դաղ, որ նշանակում է լեռ։ Լեռան գագաթներից մեկի վրա գտնվում է Սբ. Բարսեղի անապատը։ Ըստ պահպանված քրիստոնեական մի ավանդության՝ Սուրբ Բարսեղ լեռան վրա է Բարսեղ Հայրապետը տեսել իր պատմական երազը Հուլիանոս Ռուսացողի մասին։ Լեռը Ռուսական 1:200000 մասշտաբի տեղագրական քարտեզում նշված է Ալի անվամբ։

83 Հր. Աճառեան, նշվ. աշխ., էջ 61։

84 Մ. Խորենացի, Պատմություն Հայոց, Եր., 1968, էջ 274։

Հայկական լեռնաշխարհում, Վանա լճից արևելք գտնվող Կոտուրի լեռնաշղթայի արևմտյան լանջերից սկիզբ առնող և գրեթե հորիզոնականի ուղղությամբ հոսող ու արևելյան կողմից, Խառակոնիս գյուղից հարավ Արճակ լիճը թափվող Արճիշակ գետը նրանք անվանափոխել են Մահմեդիկ: Արճիշակ գետը Արճակ լիճ թափվող միակ խոշոր գետն է:

Հայկական լեռնաշխարհի Անտիպոնտական լեռնահամակարգում, Էրզրումի նահանգի Երզնկա քաղաքից մոտավորապես 25 կմ արևելյան ուղղությամբ, Բթառիճ գյուղի մոտ գտնվող Անահտա աթոռ լեռնագագաթը, որտեղ ավանդության համաձայն գոյություն է ունեցել Անահիտ աստվածուհու տաճար-մեհյանը, թուրքերն անվանափոխել են Աղդաղ, որ նշանակում է սպիտակ լեռ:

Հայկական լեռնաշխարհում, Կարսի բարձրավանդակի (սարահարթ) արևմտյան մասում, Սև ծովը թափվող Ճորոխ գետի աջ ափից սկսվող և Կարմիր փորակ լեռնաշղթայից հարավ-արևմուտք տարածվող ու նրա շարունակությունը կազմող Մեծրաց լեռները նրանք անվանափոխել են թուրքական մի քանի անուններով՝ տալով նրանց Չախըրբաբա (չախըր նշանակում է խաժակն⁸⁵, ինչպես նաև շիլ + բաբա՝ ընտիր, պատվական, նաև՝ հայր) և Չախըրդաղ, որի դաղը նշանակում է լեռ: Անվանել են նաև Սողանլուդաղ, որը նշանակում է տիտուս լեռ:

Հայկական լեռնաշխարհում, Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Բասեն գավառում, Արևմտյան Հայաստանի Կարին քաղաքից դեպի հյուսիս-արևելք, Սբ. Աստվածածին կամ Կարմիր վանքից հարավ-արևմուտք տարածվող Ծիրանյաց լեռները և լեռնագագաթը, նրանք անվանափոխել են Քիրեշլու (քիրեշ=կիր, լու-ն տեղ ցույց տվող վերջածանց է): Դ. Ինճիճյանը Ծիրանյաց լեռնագագաթն անվանում է Ծիրանի լեռ⁸⁶: Ա. Լաստիվերտցու վկայությամբ Ծիրանյաց լեռների ստորոտին էին գտնվում Օկոմի ավանը և Ակսիգոմ գյուղը⁸⁷: Ծիրանյաց լեռները հարուստ են հորդաբուխ աղբյուրներով, և նրա ստորոտներից սկիզբ են առնում մի քանի խոշոր գետեր՝ հարավ-արևմտյան ստորոտից՝ Արևմտյան Եփրատ գետը, հարավ-արևելյան ստորոտից՝ Արաքս գետի ձախակողմյան Մուրց կամ Հասանկալա վտակը, իսկ հյուսիսային ստորոտի աղբյուրները սկիզբ են տալիս Ճորոխ գետի աջակողմյան Թորթում ենթավտակին:

Հայկական լեռնաշխարհում, Երասխ գետի աջակողմյան Կարմիր գետ

85 Հ. Ա. Պոհճալեան, նշվ. աշխ.:

86 Դ. Ինճիճյան, Նոր Հայաստան, Վենետիկ, 1806, էջ 87:

87 Ա. Լաստիվերցի, նշվ. աշխ., էջ 118:

վտակի Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի Ճվաշ գավառով հոսող Ճվաշ կամ Ճվաշ-ռոտ օժանդակը նրանք անվանափոխել են՝ այն պարզապես անվանելով Աղչայ, որը նշանակում է սպիտակ գետ: Պատմահայր Մ. Խորենացու հիշատակության համաձայն՝ Հայոց Վաղարշ Ա թագավորը Հայր Իշխանին կարգել է ներքնապետ և նրան տվել. «յԱտրպատականէ մինչև ցճուաշ և ցՆախնաւան...»⁸⁸: Թ. Արծրունին Ճվաշի հետ առաջին անգամ գործածում է նաև Ճվաշ-ռոտ ձևը, որը ստուգաբանվում է Ճվաշ և ռոտ՝ պահլավերեն գետ նշանակող բառով⁸⁹: Հր. Աճառյանը գրում է, որ, ռոտը գետ նշանակող արմատ է, որն առանձին չի գործածվում՝ միայն որոշ տեղանունների մեջ, ինչպիսին Ճուաշ-ռոտն է⁹⁰:

Կիլիկիայում, Հալեպի նահանգի Մարաշի գավառում, Ջեյհան կամ Պյուռանոս գետի հովտում, նրա զառիթափ լեռնալանջին, ձիթենիներով շրջապատված վայրում գտնվող Ջեյթուն գյուղաքաղաքի հայերն 1915 թ. ինքնապաշտպանական կռիվների ժամանակ ամրանալով Կիլիկիայի Ջեյթուն գյուղաքաղաքի մոտակայքում գտնվող Սբ. Աստվածածին վանքում, որտեղ և գտնվում էր իրենց պաշտպանական շտաբը, համառ ու հերոսական դիմադրություն են ցույց տվել թուրքերին: Այդ կռիվների ընթացքում սպանվել է թուրք հարյուրապետ Սուլեյմանը, որի անվամբ էլ հետագայում թուրքերը Սուլեյմանիե են վերափոխել հայկական Ջեյթուն գյուղաքաղաքի անունը: Այն գյուղաքաղաքի, որի հայերն օգտվելով իրենց բնակավայրի երեք կողմից լեռներով շրջապատված անառիկ դիրքից, տեղում ունեցած երկաթի պաշարներից գեներ են պատրաստել ու երկար ժամանակ՝ մինչև 19-րդ դարի 60-ական թթ., և հետագայում էլ՝ 1895-1896 թթ., ինչպես նաև Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին քաջաբար կռվել թուրքական մեծաթիվ բանակի դեմ՝ պաշտպանելով իրենց և այդտեղ եղած հայկական պատմամշակութային արժեքները՝ Ջեյթունի Սբ. Աստվածածին ու Սբ. Փրկիչ վանքերը՝ նրանցում գրված բազմաթիվ ձեռագրերով հանդերձ և ավելի քան մեկ տասնյակ եկեղեցիները:

Հայկական լեռնաշխարհում, Արևմտյան Հայաստանի Բիթլիսի նահանգի Մուշի գավառում, Սասունում, Հայկական Տավրոս լեռնահամակարգի Ծովասար և Մարաթուկ լեռնագագաթների լանջերից սկիզբ առնող Տիգրիս գետի ձախակողմյան Սասնո ջուր վտակը նրանք անվանել են Բաթման, որն, ըստ Հր. Աճառյանի՝ թուրքերեն բառ է և նշանակում է «ծանրության

88 Մ. Խորենացի, նշվ. աշխ., էջ 112:

89 Թ. Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Եր., 1985, էջ 392, 523, 527:

90 Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Եր. 1977:

չափ»⁹¹: Բառը նույն իմաստն ունի նաև Հ. Ա. Պօհճալեանի վերոնշյալ բանարանում⁹²: Հնում Սասնո ջուրը կազմում էր Տիգրանակերտ (Նփրկերտ) քաղաքի և Հայաստանի պարսկաբյուզանդական սահմանի մոտ՝ պարսկական մասում գտնվող Քլիմար բերդաքաղաքի սահմանը:

Կիլիկիայի հայկական պետությունը և Կապադովկիան իրար հետ կապող Կիլիկյան Տավրոս լեռնաշղթայի ամենահարմար անցուղին՝ Կիլիկիայի կամ Տավրոսի դուռ կոչվող լեռնանցքը, որը հայտնի էր նաև Կիլիկիայի լեռնանցք, Գուգլակի լեռնանցք, Գուգլակա կապան և այլ անուններով, թուրքերն անվանափոխել են Գյուլեք բողազ (գյուլեք նշանակում է ծիծաղկոտ, իսկ բողազ-ը՝ լեռնանցք, կոկորդ, կապան): Այս լեռնանցքով էր մ.թ.ա. 6-րդ դարում անցնում պարսից Աքեմենյանների կառուցած Արքայական ճանապարհը, որն իր նշանակությունը պահպանում էր նաև հետագա ժամանակներում:

Կիլիկիայում, Հալեպի մահանգի Մարաշի գավառում Ջեյթուն գյուղաքաղաքից դեպի հարավ, 15 կմ հեռավորության վրա, Կյուրետիմի բերդի և կիրճի մոտակայքում գտնվող Մեծքար ժայռը, որի կողերին կային քարայրներ, թուրքերն անվանափոխել են Ալիդայա, որի Ալին անձնանուն է + դայա, որ նշանակում է ժայռ, ապառաժ: Այստեղ՝ Արեգին և Բերդուս գյուղերի մոտակայքում, Ջեյթունի գետի ձախ ափին, մի ընդարձակ քարայրի մոտ գտնվում էր հռչակավոր Մեծքարի վանքը, որը եպիսկոպոսանիստ էր և ուներ դպրոց:

Հայկական լեռնաշխարհում, Արևմտյան Հայաստանի Էրզրումի մահանգի Էրզրումի գավառում, Քլի գյուղաքաղաքի մոտակայքում, Սետեխառնում և Քարագլուխ լեռնագագաթների միջև ձգվում է Քարականձոր ձորակը: Այստեղ էր գտնվում արծաթի և երկաթի Քարակ անվանվող քարայր-հանքավայրը, որի անունից էլ ամենայն հավանականությամբ առաջացել է Քարականձոր անվանումը: Այստեղ եղած սառնորակ աղբյուրների ջրերից գոյացող առվակները միանալով սկիզբ են տալիս Արածանիի աջակողմյան վտակներից Քլի գետին: Քարականձորը նրանք անվանափոխել են Քելեկ-դերեսի, որում Քելեկն, ըստ Հր. Աճառյանի, նշանակում է տկալաստ, տհաս սեխ + դերեսի, որ նշանակում է ձոր, գետ⁹³:

Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի Ռշտունիք գավառում, Վանա լճի հարավային ափի մոտ ընկած Աղթամար կղզու դեմ-դիմաց, Վան քաղաքից

91 Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Եր., 1942, էջ 362:

92 Հ. Ա. Պօհճալեան, նշվ. աշխ.:

93 Հր. Աճառյան, Թուրքերեն փոխառեալ բառեր հայերենի մեջ, Մոսկուա-Վաղարշապատ, 1902, էջ 146:

մոտավորապես 35 կմ հարավ-արևմուտք, այգիներով ու պարտեզներով հարուստ վայրում էր ընկած Ահավանք կամ Ախավանք կոչվող գյուղը, որտեղ գտնվում է Ահավանից Սբ. Ջորավոր վանքը: Հ. Լինչը գյուղը հիշատակում է Աղավանք անվամբ⁹⁴: Ահավանքը, որը Աղթամարի վանքի մավահանգիստն էր, և որտեղ գտնվում էր Աղթամարի կաթողիկոսական վեհարանը, նրանք անվանափոխել են Իսքելե, որ նշանակում է նավամատույց⁹⁵: Գյուղը Իսկելե գրությամբ նշանակված է Ռուսական 1:200.000 մասշտաբի, ինչպես նաև Հ. Լինչի և Ֆ. Օսվալդի կազմած քարտեզի հայկական օրինակում⁹⁶:

Իսկալաբոյ և Իսքելեբոյու անուններով է անվանափոխվել նաև դեռևս 4-րդ դարում որպես գյուղաքաղաք հիշատակված հայաբնակ Ավանց գյուղը, որը գտնվում էր Արևմտյան Հայաստանի Վանի մահանգում, Վան քաղաքից մոտավորապես 3 կմ հյուսիս-արևմուտք, Վանա լճի արևելյան ափին: Ավանցը Վանա լճի ամենահայտնի մավահանգիստն էր, որի բնակիչներն ակտիվ մասնակցություն են ցուցաբերել Վանի 1915 թ. հեղափոխության ինքնապաշտպանության ժամանակ: Այն նաև Հայաստանի միջնադարյան գրչության հայտնի կենտրոններից էր: Այս գյուղը նույնպես Իսկելե անվամբ նշանակված է Հ. Լինչի և Ֆ. Օսվալդի կազմած քարտեզի հայկական օրինակում⁹⁷:

Կիլիկիայում, Ադանայի մահանգի Սիս քաղաքից հարավ-արևմուտք էր գտնվում առաջին անգամ գերմանացի ճանապարհորդ Վիլլեբրանդի 1211-1212 թթ. կատարած ուղևորության նկարագրության մեջ, ապա նաև՝ Կիլիկիայի թագավոր Լևոն 2-րդի 1212 թ. լատիներեն պարզագրում հիշատակված Գումբեթվոր գյուղաքաղաքը: Հետագայում թուրքերն այն անվանափոխել են Բլիջա, որ նշանակում է տաք ջուր: Այդպես անվանափոխելիս նրանք հավանաբար ի նկատի են ունեցել այդտեղ եղած տաք աղբյուրների առկայությունը:

Պատմական Փոքր Հայքում, Սեբաստիայի մահանգի Սեբաստիայի գավառի Տըրիկ գյուղաքաղաքից 15 կմ հեռավորությամբ դեպի արևմուտք, բարձր լեռան վրա գտնվող Սբ. Հակոբ վանքի անունը թուրքերն անվանափոխել են Յալընըզ Քեշիշ վանք⁹⁸: Յալընըզ նշանակում է ճգնավոր, քեշիշը՝

94 Հ.Ֆ.Բ. Լինչ, նշվ. աշխ., էջ 145:

95 Հր.Աճառեան, նշվ. աշխ., էջ 356:

96 «Հայաստան եւ հարեւան երկրներ ըստ Լինչի և Օսվալդի», քարտեզ, Բ հրատարակություն, Թիֆլիս, 1915:

97 Հ. Ֆ. Բ. Լինչ և Ֆ. Օսվալդ, նշված քարտեզ:

98 Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., հ. 3, Եր., էջ 314:

քահանա:

Արևմտյան Հայաստանում, Խարբերդի նահանգի Խարբերդի գավառում, Արաբկիրի գավառակի կենտրոն հանդիսացած Արաբկիր գյուղաքաղաքի Քեշիշլեր թաղամասում էր գտնվում Սբ. Հակոբի վանքը: Նրա վանքապատկան հողատարածությունները տարածվում էին Արաբկիր և Խարբերդ քաղաքներն իրար միացնող ճանապարհի երկու կողմերում: Գյուղաքաղաքի Քեշիշլեր թաղամասում գտնվելու պատճառով վանքն անվանել են նաև Քեշիշլերի վանք⁹⁹:

Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի Արտազ գավառում, Երասխ գետի աջակողմյան Դեղին վտակի աջ կողմում, Մակու քաղաքից 25 կմ հարավ-արևելք, Սբ. Թադևոս Առաքյալ կամ Սբ. Թադեի վանքի և Ծործոր գյուղի մոտակայքում գտնվող Թադե անվամբ գյուղը թուրքերն անվանափոխել են Կարաքիլիսա (կարա՝ նշանակում է սև + քիլիսա՝ եկեղեցի): Կարաքիլիսա անվամբ են նրանք վերանվանել նաև Թադե և Ծործոր գյուղերին մերձակա, Ավարայրի դաշտի հյուսիս-արևմտյան կողմում գտնվող Սբ. Թադևոս Առաքյալ (Սբ. Թադե) կամ Ծործորի Սբ. Աստվածածին կոչվող վանքը, որն իր ճարտարապետական հորինվածքով շատ նման է Էջմիածնի Մայր տաճարին: Սբ. Թադե վանքը եղել է Ատրպատականի հայկական եկեղեցական թեմական կենտրոնը:

Արևմտյան Հայաստանում, Էրզրումի նահանգի Երզնկայի գավառում Կամախի սարահարթում, Մեպուի լեռան մոտակայքում ընկած Աղցք լեռան ստորոտում գտնվող Հին տներ կոչվող ավերակ բնակավայրի անունը նրանք անվանափոխել են Կըրխքիլիսա (կըրխ՝ նշանակում է քառասուն + քիլիսա՝ եկեղեցի): Այդպես են անվանել որովհետև, ըստ ավանդության, այդտեղ եղել է քառասուն եկեղեցի: Հին տներ անվամբ հիշատակում է Ղ. Ալիշանը¹⁰⁰:

Հայկական լեռնաշխարհում, Արևմտյան Եփրատ գետի ակունքներից մեկը, որ հոսում է Կարին քաղաքից հյուսիս ընկած տարածքով և կոչվում Խաչափայտի ջուր, նրանք անվանափոխել են Դումլուսու: Ըստ պահպանված ավանդության՝ գետակն իր Խաչափայտի ջուր անունը ստացել է բյուզանդական Հերակլ կայսեր կողմից բերված ու այստեղ թաքցված Քրիստոսի խաչափայտից, որի խփված տեղից հրաշքով բխել է այս ջուրը: Ավանդությունն ասում է. «Յունաց Հերակլ կայսրն երբ Քրիստոսի խաչափայտին մասերը պարսից ձեռքին առնելով այս կողմերը բերաւ եւ երբ ստիպուեցան

99 Ա. Փոլատեան, Պատմություն հայոց Արաբկիրի, Նիւ Յորք, 1969, էջ 500:

100 Ղ. Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855, էջ 41:

քշնամեաց արշաւանքին դէմ դնել նորէն խաչափայտի մասերը եւ այս լեռան վրա պահեց եւ յաղթութեամբ դառնալուն՝ պահած մասերը տեղէն հանելուն պէս, հրաշխք այս ջուրը բոլխեր է, որմէ առած է լեռս իւր անունը»¹⁰¹։ Խոսքը վերաբերում է Հայկական լեռնաշխարհի Անտիպոնտական լեռնահամա-կարգի արևելյան հատվածում, Ճորոխ և Արևմտյան Եփրատ գետերի միջև հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք ձգվող Ծաղկավետ լեռներին և Ծաղկավետ լեռնագագաթին, որտեղից և սկսվում է Խաչափայտի գետը կամ Խաչափայտի ջուրը, որի անվամբ էլ Խաչափայտի լեռներ և Խաչափայտ լեռնագագաթ էին կոչվում Ծաղկավետ լեռները և լեռնագագաթը։

Խաչափայտի մասին գրում են բազմաթիվ պատմագիրներ և ուսումնա-սիրողներ։ Ղ. Ալիշանը գրում է, որ Խաչափայտի ավազանում են թաքցրել խաչափայտը և ապա տեղափոխել Կոստանդնուպոլիս¹⁰²։ Խաչափայտի ջուր և Տունլիսու անուններով հիշատակում է Ղ. Ինճիճյանը¹⁰³։ Վենետիկի Մխիթարյան միաբանության «Բազմավեպ» ամսագիրը գրում է. «Խաչա-փայտ [Տունլի տաղ] լեռներ Շաղագոմք գավառի արևելյան սահմանին»¹⁰⁴։ Հ. Ոսկյանը հիշատակում է Խաչափայտ լեռ Կարինի մոտ¹⁰⁵։ Հակոբ Կար-նեցին գրում է, որ Խաչափայտ գետը սկիզբ է առնում Կարին քաղաքի հյու-սիսում գտնվող Տունլի լեռից և ինքն էլ կոչվում է նույն անվամբ¹⁰⁶։ Այս գե-տակն առաջացրել է Խաչափայտի լիճը, որը կոչվում էր նաև Սուրբ Խաչի աղբյուր, որը նույնպես նրանք վերանվանել են Դումլու կամ Դումլիքունար անվանումներով։ Դումլու նշանակում է պաղ, սառը, բուճար՝ աղբյուր։ Եվ այսպես՝ թուրքերը մեկ՝ Դումլու բառով անվանափոխելով միանգամից վե-րացրել են հայկական բարեհունչ ու իմաստալից մի քանի աշխարհագրա-կան օբյեկտների անվանումները։

Արևմտյան Հայաստանում, Վանի նահանգի Վանի գավառի հարավ-արևմտյան կողմում, Վան քաղաքից 60 կմ հարավ-արևմուտք, Մոկս գետի աջ ափին էր գտնվում Մոկս գավառակի կենտրոնը՝ Մոկս գյուղաքաղաքը։ Ըստ պահպանված ավանդության՝ արևելքի 3 մոզեր (մոզք), այցելության են գնում նորածին Քրիստոսին և երեք ամիս մնում են այդտեղ։ Նրանցից

101 Հ. Քոսյան, Բարձր Հայք, Վիեննա, 1925, էջ 5:

102 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 37:

103 Ղ. Ինճիճյան, նշվ. աշխ., էջ 76:

104 «Բազմավեպ», Վենետիկ, 1908, էջ 404:

105 Հ. Ոսկյան, Բարձր Հայքի վանքերը, Վիեննա, 1851, էջ 125:

106 Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հ. 2, Եր., 1956, էջ 578:

Գասպար անունով մեկը մահանում և թաղվում է այդտեղ¹⁰⁷: Մոկսի մոտ էր գտնվում Գասպար մոգի գերեզմանը, որից և գուցե առաջացած լինի գյուղաքաղաքի անվան Մոգս տարբերակը: Մոգսը հիշատակված է նաև ձեռագիր հիշատակարաններում: Մեջքերենք դրանցից մեկը. «Արդ՝ գրեցաւ Սր. Ավետարանս ի քաղաքս Մոգս...»¹⁰⁸: Մոկս գյուղաքաղաքի մոտ էին գտնվում նաև Մոկաց Սր. Գևորգ և Սր. Ամենափրկիչ վանքերը: Մոկս անունը թուրքերն անվանափոխել են Բահչեսարայ անվամբ (բահչե նշանակում է պլտ-դատու այգի + սարայ՝ պալատ):

Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Վանանդ գավառում, Սարիղամիշի շրջանում, նոր ժամանակներում Կարսի մարզում գտնվող Կաճկաքար գյուղը, որտեղ 852-853 թթ. կռիվներ են տեղի ունեցել հայերի և արաբական զորքերի միջև, թուրքերն անվանափոխել են Քեքեչ, որը նշանակում է կակազ:

Կիլիկիայում, Հալեպի նահանգի Մարաշի գավառում, Ջեթուն քաղաքից 25 կմ հեռավորությամբ դեպի արևմուտք, Կանչի կապան կիրճի ելքի մոտ, Կանչիբերդ և Սր. Ստեփանոս վանքի ավերակներից հյուսիս գտնվող Կանչի գյուղանունը նրանք անվանափոխել են Չուխուր հիսար, չուխուր նշանակում է գոգավորություն, փոս, հիսար՝ ամրոց: Այդ անունը նրանք տվել են նաև Կանչի գյուղի մոտակայքում, նրանից հյուսիս գտնվող Ջեթունի ամենանշանավոր Կանչիբերդ բերդավան-դոյակին, որը կարևոր դեր էր կատարում հատկապես Կիլիկիայի հայկական պետության ժամանակաշրջանում:

Կիլիկիայում, Հալեպի նահանգի Մարաշի գավառում, Ջեթունի գավառակում, նրա ամենանշանավոր Կանչիբերդից և Կանչի գյուղից հարավ-արևելք, Ջեյհան կամ Պյուռամոս գետի ավազանի Ֆռնուս գետակի հովտում գտնվող Կիլիկիայի ամենամանուր և գեղատեսիլ ձորահովիտներից մեկը՝ Կանչի կապան լեռնանցքը, որը հիշատակվում է նաև որպես կիրճ, նրանք անվանափոխել են Դըսըխ, որը պարզապես նշանակում է կիրճ:

Արևմտյան Հայաստանում, Վանի նահանգում, Վան քաղաքից մոտավորապես 15 կմ հեռավորությամբ դեպի արևելք, Վարազա լեռան հյուսիս-արևելյան ստորոտներում, Ոսկերակ հայաբնակ գյուղից հյուսիս-արևելք գտնվում է ուրարտական թագավոր Ռուսա 1-ին (մ.թ.ա. 8-րդ դար) նախաձեռնությամբ Տուշպա (Վան) քաղաքին ջուր մատակարարելու համար կառուցված «Ռուսայի լիճ» կոչվող արհեստական ջրամբարը (լճակը), որի մասին նա թողել է սեպագիր արձանագրություն: Լճակը նրանք

107 Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Եր., 1969, էջ 152:

108 Վ. Հակոբյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ 1612-1620, Եր., էջ 766:

